ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԳԱՀԱԿԱՐԳՈՒՄ

ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ

Տարբեր ծագում ունեցող մի շարք աղբյուրներից հայտնի է, որ հնում և վաղ միջնադարում Առաջավոր Ասիայում ընդունված էր արքայական գահերի ու գրանց ներքո գանվող պետությունների իշխանության աստիճանավորում կամ գահակարգում: Գահակարգի գոյությունը հաստատող ուղղակի վկայությունները հիմնականում վերաբերում են պարթևական տիրապետության ժամանակներին: Հռոմեական պատմագիր Տակիտոսի (I–II դդ.) համաձայն, պարթև Արշակունիները իրենց հզորության ու իշխանության բարձրագույն կամ առաջին աստիճանը համարել են Պարթևքի, երկրորդը՝ Սարաստանի և երրորդը՝ Հայաստանի տիրապետությունը: Այս աստիճանակարգն ու տիրապետության սահմանները ժառանգվել էին Կյուրոսի ու աքեմենյանների կողմից, որոնց Արշակունիները համարել են իրենց «պապերը» և նրանց «արդարությամբ» սահմանած այս կարգին հետևելը համարել իրենց օրինական իրավունքը[1]:

Գահային աստիճանակարգի վերաբերյալ մի շարք տվյալներ է պահպանել հայ միջնադարյան պատմագրությունը: Այս առումով առավել հանգամանալից է Ագաթանգեղոսը. «Խոսրով թագաւորն Հայոց,– որ էր երկրորդ տէրութեանն Պարսից, դի որ Հայոց թագաւոր էր՝ նա էր երկրորդ Պարսից տէրութեանն»: Մյուս վկայությունը վերաբերում է աքեմենյան շրջանին, ըստ որի Կյուրոսը «իւրն երկրորդ» է առել Տիգրան Երվանդյանին: Եվս մեկ վկայություն վերաբերում է ասորեստանյան շրջանին, որի համաձայն Հայկյան Արամը Նինոսի երկրորդն է կոչվել[2]:

Գահակարգի գոյությունը հաստատող տվյալները վերաբերում են շատ ավելի վաղ ժամանակների: Ընդ որում ոչ միայն արյաց ազդեցության ներքո գտնվող երկրներում, այլ առնվազն ողջ առաջավորասիական տարածաշրջանում: Դա ենթադրելի է նույնիսկ խեթական տվյալներից. Սուպիլուլիումաս I-ը (մ. թ. ա. II հզ.) Հայասայի թագավոր Հուկկանասին համարում է «երկրորդ կարգի հերոս» և իրեն «Հայր» է նշանակում նրա վրա[3]: Այս օրինակից ակնհայտ է, որ իշխանության աստիճանակարգմանը զուգահեռ տրված «Հայր» կոչումը նույնպես արտահայտում է կողմերի իշխանության աստիճանը:

Կողմերի իշխանության հարաբերակցությունը «Հայր, Եղբայր, Որդի» կոչումներով արտահայտելու մի շարք արտահայտիչ օրինակներ ունի հայ

---

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (այսուհետ՝ ՀԺՊՔ). Երևան. 1980, էջ 338 (Տ ա կ ի տ ո ս. Տարեգրություններ, XV, 2):

2 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. Հայոց պատմություն. մաս 18, Երևան, 1983, էջ 24: Դավիթ Բաղիշեցիու ժամանակագրությունը. Մանր ժամանակագրություններ. հ. 2, Երևան, 1956, էջ 307: Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի. Հայոց Պատմություն. I, ԺԳ, Երևան, 1981, էջ 54–55 (բոլոր ընդգծումները մերն են – Մ. Օ.):

3 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն (այսուհետ՝ ՀԺՊ). հ. 1, Երևան, 1970, էջ 198:

պատմագրությունը: Հայոց Վաղարշակ թագավորն իր ավագ եղբորը՝ պարսից Արշակ Մեծին ուղղված «թղթում» իրեն ազգակցությամբ նրա եղբայրն է համարում, բայց ի պաշտոնե՝ «Որդին», այդպիսով արտահայտելով իր գահի ենթակայությունը գերագույն գահին: Նույն կոչումներն են առկա հայոց, մարաց և պարսից թագավորների փոխհարաբերություններում: «Եղբայր» տիտղոսի նշանակության առումով ավելի ուղղակի է բյուզանդական պատմագիր Պրոկոպիոսը, ըստ որի պարսից Պակուր արքան «եղբոր նման հավասար համարեց» հայոց Արշակ թագավորին: Նույն կոչումներն են առկա նաև Ասորեստանի և Ուրարտուի փոխհարաբերություններում: Աշուրբանիպալի (մ.թ.ա. 668–633) արձանագրության համաձայն, նա կրել է առաջնություն արտահայտող «Հայր», իսկ Սարգուրը՝ հպատակություն նշանակող «Որդի» կոչումը: Իսկ մինչ այդ նրանց «թագավոր հայրերը» գտնվել են «Եղբայրության», այն է՝ իշխանության չափի հավասար աստիճաններում[1]*:*

Գահակարգի ծագման ու հաստատման լուսաբանման հարցում առանձնահատուկ տեղ է գրավում Քսենոփոնի «Կյուրոպեդիան»: Այս կիսագեղարվեստական երկում տարբեր ժամանակներում տեղի ունեցած որոշ իրադարձություններ, հատկապես Ասորեստանի գրավումը, վերագրվել է Կյուրոս Մեծին և համատեղվել նրա ժամանակներում, ինչը Քսենոփոնին ժամանակակից մեկ այլ հույն պատմագիր՝ Կտեսիասը (Դիոդորոսի միջնորդությամբ) իրավացիորեն վերագրել է նրանից մոտ կես դար առաջ հանդես եկած, Ասորեստանի նվաճումը գլխավորած, մարաց թագավոր Արբակեսին: Սա նշանակում է, որ «Կյուրոպեդիայի» տվյալները, որոշ շեղումներից անկախ, պատմական ստույգ իրադարձությունների արձագանք են, ինչը շատ ավելի ակնհայտ է դառնում, երբ դրանցից առանձնացվում են գեղարվեստական հորինվածքները: Այն առաջնային կարևորության տվյալներ է հաղորդում հատկապես քննարկվող խնդրի առնչությամբ, ըստ որի գահակարգումը, էթնիկ առաջնորդներին ու բարձրագույն իշխանավորներից «ամեն մեկին պատվելու իր աստիճանը, գահը», նրանց «տեղաբաշխումը նստած թե կանգնած», սահմանել է Կյուրոս Մեծն իր տիրակալության վերջին շրջանում: Այս մասին խոսվում է երկի վերջում, բայց դրանում, սկզբից մինչև վերջ, իշխանության աստիճանակարգը ակնհայտ է ոչ միայն պալատական նիստուկացում, այլև ռազմաքաղաքական փոխհարաբերությունների ըստ էության բոլոր ոլորտներում: Այն արտահայտված է հատկապես Մարաստանի գլխավորած դաշինքի մեջ ընդգրկված առաջնային երկրների ու էթնոսների և դրանց առաջնորդների թվարկման, ողջ «Կյուրոպեդիայում» նույնությամբ պահպանված հերթականությամբ: Կյուրոսի հրամանատարության տակ գտնվող բանակը բոլոր արշավներում պահպանում է պարսիկներ, մարեր, հայեր էթնիկ շարակարգը: Նույն հերթականությամբ է ձևավորվում ժամանակի հզոր ռազմական տեխնիկայի

---

4 Խորենացի, I, Թ, ԻԸ, III, ԺԷ, ԾԱ, էջ 36, 92, 330, 400: Փավստոս Բուզանդ. Հայոց Պատմություն, ԺԶ, Ի, ԾԳ, ԾԴ, Երևան, 1987, էջ 194, 204, 252, 254, 258: ՀԺՊՔ, էջ 490 (Պրոկոպիոս Կեսարացի. Պատերազմների մասին, I, 5): И. М. Дьяконов. Последние годы Урартского государства. — Вестник древней истории (ВДИ), 1951, N 2, с. 30, 31; Ассиро-вавилонские источники по истории Урарту. — ВДИ, 1951, N 3, 72 (10).

4 «խորտնկեց մեքենաների» կառուցումը. դրանցից երկուսը ստանձնում է Կյուրոսը, մեկական՝ Մարաստանի թագավոր Կյուաքսարեսը և հայոց զորքերի հրամանատար, արքայորդի Տիգրանը, ևս մեկ հատ՝ այս դաշինքի կողմն անցած ասորեստանցի նախարարները: Ավարի և գանձերի բաժանումը նույնպես տեղի է ունենում նույն կարգով՝ Կյուրոսը նախ տալիս է մարերի ու Տիգրանի հասանելիքը, որից հետո՝ մյուսներինը: Նույն կարգով են ելույթ ունենում էթնիկ զորաբանակների հրամանատարները. սկզբում ճառում է Կյուրոսը, հետո մարերի հրամանատարը, որից հետո Տիգրանը: Կյուրոսի հրավիրյալների մեջ նույնպես հիշվում է նախ «Արտարազ Մարը», հետո՝ «Տիգրան Արմենը»: Նույն հերթականությունն է թե՛ Կյուրոսի կանչով գնալիս և թե՛ նույնիսկ լվացվելիս կամ ուղղակի որևէ այլ առիթով նրանց թվարկելիս: Առաջնային այս եռյակի հետ երբեմն հիշատակվում են նաև սակերը և կագուսիները, բայց որպես կանոն՝ պարսիկներից, մարերից և հայերից հետո[5]:

Որոշ դեպքերում էթնոսների թվարկման այս ասաիճանակարգը խախտվում է հյուրկանացիների հիշատակությամբ: «Կյուրոպեդիայի» համաձայն վերջիններս մի փոքրիկ, ընդամենը 1000, հետագայում եռապատիկ ավելացված հեծյալներ ունեցող ցեղ էին: Կյուրոսի հետ կնքված պայմանագրով նրանք ձեռք էին բերել այն նույն արտոնությունները, ինչ որ ունեին պարսիկներն ու մարերը[6]: Ասորեստանին դավաճանած և Մարաստանի կողմն անցած հյուրկանացիներին Կյուրոսը մեծարում և առաջնային տեղ էր տալիս ոչ թե նրանց գրաված բարձր դիրքի, այլ հակառակորդի հպատակների շարքերը լքողներին ոգևորելու համար: Այստեղ առավել կարևոր է այն հաղորդումը, որ դաշնակից, արտոնյալ էթնոսների շարքում տեղ ունենալը ոչ թե ավանդույթ կամ սովորույթ էր, այլ պայմանագրով հաստատված իրավունք: Սա համահունչ է Տակիտոսի վերոհիշյալ վկայությանը, ըստ որի գահակարգումը հիմնվել է դեռևս Կյուրոսի ու իրենց «պապերի» սահմանած օրենքներով: Հայ պատմագրությունը նույնպես հաստատում է, որ արքայական գահերին տիրելու կարգը եղել է «ըստ իրաւանց» կամ «ըստ օրինաց թագաւորաց»[7]:

Այսպիսով, «Կյուրոպեդիայի» համաձայն, Մարաստանի գլխավորած դաշինքում ակնհայտ առաջնություն է տրվել 3 էթնիկ միավորների՝ մարերին, պարսիկներին ու հայերին: Այս հանգամանքը լիովին ստանում է իր բացատրությունը, երբ դրան համադրում ենք մարերի առաջնորդած բանակի նախնական էթնիկ կազմը ըստ քանակի. մարեր՝ 70000, պարսիկներ՝ 30000, արմեններ՝ 28000[8]:

---

5. Տե՛ս Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին (այսուհետ՝ ՕԱՀՀՄ). հ. 14, Հին հունական աղբյուրներ. Դ ի ո դ ո ր ո ս Ս ի կ ի լ ի ա ց ի. Պատմական գրադարան (Հատվածներ), II, 24-28, Երևան, 1985, էջ 32-38: Ք ս ե ն ո փ ո ն. Կյուրոպեդիա, IV, 2(9, 10, 18, 43), 5(1, 4), էջ 141, 143, 149, 158, V, 1(19–27), 3(38-42), 4(13), 5(5), էջ 178-180, 199, 206, 215, VI, 1(20), էջ 230, VIII, 3(16, 17, 25), 4(1-5, 24), Երևան, 2000, էջ 329-332, 338, 339, 344 (այս և նույն հեղինակի մյուս երկի «Անարասիսի», ինչպես նաև հին հունական մյուս պատմագիրներ Հերոդոտոսի ու Դիոդորոսի ամբողջական կամ հատվածաբար թարգմանությունները ըստ Ս. Կրկյաշարյանի):

6 Կյուրոպեդիա, IV, 2(1, 7, 8, 43), 5(35), էջ 139-141, 149, 165, V, 4(13), էջ 206:

7 Խ ո ր ե ն ա ց ի, II, ԺԹ, էջ 152: Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, մաս 30, էջ 30: Բ ո ւ զ ա ն դ, IV, ԺԶ, ԾԴ, էջ 258:

8. Կյուրոպեդիա, II, 1 (2, 7), էջ 59, 61, III, 1 (34), 2(23, 24), 3(1, 4), էջ 104, 113-114, 116, 117: Հայոց բանակի ընդհանուր քանակը 48000 էր, որից Կյուրոսին է տրվում դրա կեսը և

Ասորեստանի դեմ առաջին ճակատամարտը տալիս է միայն այս էթնիկ միավորներից կազմված բանակը: Երկրորդ ճակատամարտում 1000 հեծյալով նրանց են միանում հյուրկանները: Միայն Բաբելոնի արշավանքին, առաջնային եռյակին միանում են նաև կատիշների, սակերի և ասորեստանցի երկու դավադիր նախարարների զորամասերը[9]:

Այսպիսով, «Կյուրոպեդիայի» համաձայն, Ասորեստանի դեմ պատերազմող դաշնակցային բանակը նախապես կազմված էր ընդամենը երեք երկրների՝ Մարաստանի, Պարսկաստանի և Հայաստանի զորքերից, որոնք նույն հերթականությունն ունեցող իրենց քանակությամբ գերազանցել են մյուս էթնիկ բանակներին: Զինակցության նախնական պարտավորվածությունը նույնպես գոյություն է ունեցել միայն նույն եռյակի միջև[10]: Այս ճշգրտումներից ակնհայտ է, որ մարերին, պարսիկներին և հայերին տրված առաջնությունը պայմանավորված էր նրանով, որ սրանք հանդիսացել են սույն դաշինքի հիմնադիր կողմերը և ռազմական ուժի հիմնական ներդնողները: Թեև այս եռյակին հետագայում միանում են այլ դաշնակիցներ, բայց գլխավորող եռյակը չի փոխվում և ինչպես ակնհայտ է դառնում այս և հետագա աղբյուրներից, այն ըստ էության նույնությամբ պահպանվում է աքեմենյան և ոչ էական տարբերությամբ նաև պարթևական և սասանյան ժամանակներում:

Հռոմեացի պատմագիր Ռուփոսի համաձայն, Իսոսի ճակատամարտում Ալեքսանդր Մակեդոնացու դեմ դուրս բերված աքեմենյան բանակը գլխավորում է նույն էթնիկ եռյակը, իրենց զորաքանակին համապատասխանող հետևյալ շարակարգով. պարսիկներ՝ 100000, մարեր՝ 60000, հայեր՝ 47000: Այնուհետ թվարկվող էթնիկ զորամիավորումները, ինչպես մարերի գլխավորած դաշնային բանակում էր, քանակով զիջում են այս եռյակին[11]:

Քսենոփոնի «Կյուրոպեդիայի» ու «Անաբասիսի», ինչպես նաև հին հունական այլ պատմագիրների համաձայն, աքեմենյան բանակի էթնիկ դասավորությունը միմյանց հաջորդող շարակարգից բացի, ունեցել է նաև եռաճակատ (կենտրոն, աջ ու ձախ թևեր) դասավորություն[12]: Այս մասին առավել մանրակրկիտ տվյալներ են հաղորդում Ռուփոսը և հույն պատմագիր Արիանոսը, որոնց համաձայն Արբելայի կամ Գավգամելայի ճակա-

---

խալդայական 4000-ոց զորամասը, որը ըստ Քսենոփոնի թե՛ այս, թե՛ հետագա ժամանակներում, հաստատված պայմանագրով հայոց բանակի մի հատվածն է կազմել: Խալդայական զորամասի մասին տե՛ս նաև Ք ս ե ն ո փ ո ն. Անաբասիս, IV, 3(3), Երևան, 1970, էջ 89:

9 Կյուրոպեդիա, IV, 2(9, 18, 19, 23, 32), 6(2), էջ 141, 143-146, 170, V, 2(25), 3(8, 9, 24), էջ 187, 192, 193, 196: VII, 5(50), էջ 297:

10 Նույն տեղում, I, 5(2-4), էջ 35, 36, II, 4(12), էջ 88, III, 1(10, 21), էջ 96, 100, V, 5(15, 16, 20), էջ 218, 219:

11 Ռ ո ւ փ ո ս, III, 2 (4-9), էջ 282: Հայոց զորքի այս թվաքանակին վերաբերող ողջ նախադասությունը («Հայերը ուղարկեցին 40000 հետևակային, դրան հավելելով 7000 հեծելազոր») «աննկատ» է մնացել ռուսերեն թարգմանությունում, թեև այն առկա է զուգահեռ տրված լատիներեն բնագրում (К в и н т К у р ц и й Р у ф. История Александра Македонского. М., 1963, III, 2 (6), с. 22): *Այս «վրիպակը» բնականաբար անցել է ռուսերենից հայերեն թարգմանությանը, իսկ տարբեր գիտական ձեռնարկներում հայոց զորքերի մասնակցությունը նշվում է միայն Արբելայի ճակատամարտին, այնինչ բաց թողնված հատվածը վերաբերում է դեռևս Իսոսի մարտին պատրաստվող աքեմենյան բանակի կազմին:*

Կուրցիոս Ռուփոսի «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը» և Արիանոսի «Ալեքսանդրի արշավանքը» աշխատությունները հայերեն հրատարակված են մեկ գրքով (Երևան, 1987, թարգմանությունը ռուսերենից՝ Ա. Մարդսյան, Ռ. Մավիսակալյան):

12 Անաբասիս, I, 8(3–22), էջ 27-30: Հ ե ր ո դ ո տ ո ս. Պատմություն, VII, 60, Երևան. 1986, էջ 407: Դ ի ո դ ո ր ո ս, XVII, 19(4), 58(1), 59(5), 60(5), էջ 80, 94, 95, 96:

տամարտում, աքեմենյան բանակի կենտրոնում կանգնել է արքայից արքան պարսկական «անմահների» գնդով և այլ զորաբանակներով, աջ թևը գլխավորել են Մեծ Հայքի զորամասերը, իսկ ձախ թևը՝ բակտրիական զորքերը: Քանի որ նախորդ՝ Իսոսի ճակատամարտից առաջ մարերը թե՛ շարակարգով, թե՛ քանակով, Ռուփոսի համաձայն գրավել են երկրորդ տեղը, ապա սպասելի էր, որ Արբելայում նրանք պետք է գլխավորեին ձախ թևը: Հնարավոր է, որ մարերին բակտրիացիներով փոխարինումը Իսոսի ճակատամարտի ելքով պայմանավորված վերագասավորություն էր, երբ ձախ թևը, որը հավանաբար գլխավորել են մարերը, առաջինը փախուստի դիմեց, ինչից հետո Դարեհի զորքը ջախջախիչ պարտություն կրեց, իսկ ընտանիքը գերի ընկավ[13]:

Այս վերլուծությունից ակնհայտ է, որ իշխանության աստիճանակարգում տեղերի փոփոխությանը ուղիղ համեմատական, փոփոխվել է նաև գլխավորող էթնիկ եռյակի զորքերի քանակը՝ երբ գերիշխում էին մարերը, ապա նրանք էին զորաքանակով գրավում առաջին տեղը, իսկ այս դեպքում այդ տեղը գրավում են գերիշխանության հասած պարսիկները, երկրորդ տեղում թողնելով մարերին: Իսկ հայերը թե՛ զորաքանակով, թե՛ զորաշարով, երկու դեպքում էլ գտնվել են երրորդ տեղում: Նույն՝ երրորդ աստիճանն է արտահայտում նաև հայերի աջ զորաթևում գտնվելը, քանի որ ըստ Քսենոփոնի, արյաց արքունի նիստուկացում, աջ կողմի համեմատ առավել բարձր աստիճան է համարվել արքայից արքայի ձախ կողմը գրավողի տեղը[14]: Այս տվյալներից հետևում է, որ արյաց էթնիկ զորքերի ոչ միայն քանակը, այլև շարակարգը թելադրվել է դրանք ներկայացնող երկրների գահակարգում գրված տեղերով: Այսինքն առաջին շարքում կամ կենտրոնում կանգնել են առաջին գահին տիրող երկրի զորքերը, որոնք ամենամեծ քանակն են ունեցել, իսկ երկրորդ և երրորդ շարքերում կամ ձախ ու աջ թևերում՝ իրենց շարակարգին ու քանակին համապատասխանող գահերին տիրող տերությունների զորքերը: Ակնհայտ է նաև այն, որ գահակարգումը կամայական չէր և պայմանավորված էր տվյալ էթնոտիրապետության ռազմական իրական հզորությամբ:

Ներկայացված տվյալներից միանգամայն ակնհայտ է, որ մարական և աքեմենյան տիրապետությունները մարերի, պարսիկների ու հայերի գլխավորությամբ ու զինակցությամբ ստեղծված դաշնություններ էին: Մ.թ.ա III դարում Իրանում նվաճելով գերիշխանությունը, այս գլխավորող եռյակին են միացել նաև պարթևները: Այս 4 էթնոսների առաջնությունը ուղղակիորեն փաստում է հայ միջնադարյան պատմագրությունը, որը Արշակունիների տիրապետությունը նկատի առնելով հայտնում է, որ այն «պարունակեալք է չորից ազգաց՝ Մարաց, Պարսից, Հայոց և Քոշանաց»: Նույն վկայության այլ տարբերակում թեև ասվում է 4 (Դ) ազգ, բայց թվարկվում են երեքը՝ «Պարսից, Հայոց և Քոշանաց»: Սրանից ենթադրելի է, որ թեև պարթևների գերիշխանության գալով տարածաշրջանի առաջնային 3 էթնոսները մեկով ավելացել էին, բայց գահային նախնական եռաստիճան համակարգը պահպանվել էր: Հավանական է, որ պարթևական ժամանակ-

13 Ռ ո ւ փ ո ս, IV, 12 (6–12), էջ 350–351: Ա ր ի ա ն ո ս, II, 8 (10, 11), 10(4), 11, էջ 64, 66-68, III, 11(3-7), էջ 100, 101:

14 Կյուրոպեդիա, VIII, 4 (3), էջ 338:

ներում Իրանական բարձրավանդակը ընդգրկող պարսից, մարաց և պարթևաց ցեղակից երկրները միավորվել են մեկ միասնական տիրապետության մեջ, մեկ գահի ներքո: Դեռևս Կյուրոսի կողմից առկա էր «օժիտ» ստացած Մարաստանը Պարսքի հետ միավորելու միտումը: Այս փոփոխության հետևանք պետք է համարել այն, որ պարթևական վերջին շրջանում, Ագաթանգեղոսի համաձայն Հայաստանն արդեն տիրում էր ոչ թե երրորդ, այլ եզկրորդ գահին, ինչը կարող էր այսպիսի համատեղման արդյունք լինել: Քանի որ այդպիսով մեկ գահ կրճատվել էր, ապա գուցե գահային եռաստիճան համակարգը պահպանելու համար, պարթևները առաջնային դահակարգ էին ընդգրկել նոր պետություն՝ Քուշանը: Պարթևքից արևելք գտնվող «Քուշանաց աշխարհը» Խորենացին համարում է «Պարթև» և «Պահլավիկ» ազգերի երկիր, որին բարձրագույն գահակարգ ընդգրկումը պետք է համարել պարթևական գերիշխանության արդյունք[15]:

Պարթևների ժամանակ գահային եռաստիճան համակարգի պահպանման մասին է վկայում իշխանության 3 աստիճաններին առնչվող Տակիտոսի մեջբերված հաղորդումը: Նույնն է հաստատում Ստրաբոնը, որն, ինչպես Քսենոփոնը, պահպանելով առաջնային երկրների ու էթնոսների թվարկման որոշակի հերթականություն, Ասիայում որպես «լավ հայտնի» էթնոտիրապետություններ է առանձնացնում «Պարթևստանը, Մարաստանը և Հայաստանը»[16]:

Գահային աստիճանակարգը, հավանաբար նույնությամբ, որոշ ժամանակ պահպանվել է նաև սասանյան ժամանակներում: Թեև այս արքայատոհմի հիմնադիր Արտավանը իրեն Հայաստանի գեմ գավագիր ծառայություն կատարելու պատրաստակամություն հայտնած «Պարթևաց տէրութեան գլխաւոր նահապետ» Անակին խոստանում է «քեզ թագ եդեալ փառաւորեցից ... և երկրորդ ինձ կոչեցից»[17], բայց Հայաստանը երկրորդ գահն ըստ ամենայնի պահպանել է: Փավստոսի համաձայն, «երկրորդական զմեծ տունը» հայոց Արշակ թագավորին պարգևել, ավելի ճիշտ գահակարգում նրա երկրորդ տեղը ճանաչել է սասանյան Շապուհ արքան[18]: Նույնն են հաստատում սասանյան աղբյուրները, որոնց համաձայն «Երանի և Աներանի» բարձրագույն գահին հավակնող «Քուշանների Մեծ Արքա» Ներսեհը բաղմում է հայոց գահին (272-293), որից հետո միայն բարձրանում առաջին դահ[19]: Սա արտահայտում է Քուշանշահրի համեմատ հայոց գահի առաջնությունը, որի հաջորդ աստիճանը գերագույն գահն էր:

Սասանյանների տիրապետության երկրորդ շրջանում, հայոց գահի վերացումով (428 թ.), տարածաշրջանի երկրների միջև գահակարգումը վե-

---

15 Անանուն Սեբաստացու տարեգրությունը. Մանր ժամանակագրություններ. հ. 2, էջ 121, 122 (երկու տարբերակներ): Վարդան Բարձրբերդցի. Տիեզերական պատմություն. Մ., 1861, էջ 44: Խորենացի, II, Բ, ԿԸ, ՀԲ, էջ 114, 246, 252: Ագաթանգեղոս, 18, էջ 24: Կյուրոպեդիա, VIII, 5(19), էջ 351:

16 Страбон. География, XI, 1(4), М., 1964, с. 466.

17 Ագաթանգեղոս, 25, 26, էջ 28:

18 Բուզանդ, IV, ԺԶ էջ 194:

19 ՀԺՊ, հ. 1, էջ 44-50: В. Г. Луконин. Древний и раннесредневековый Иран. М., 1987, с. 137, 224, 230.

բացել է: Ասպարեզում մնացած Պարսկաստանի ու Հռոմի, այնուհետև Բյուզանդիայի միջև պայքարն ընթացել է սոսկ գերագահության համար:

Այսպիսով, ներկայացված տարաբնույթ տվյալների համաձայն, Ասորեստանի կործանումից մինչև սասանյան սկզբնական ժամանակները, Հայաստանը հանդիսացել է առաջավորասիական տարածաշրջանի 3 հզոր և առաջնային էթնոտիրապետություններից մեկը: Հայաստանի հզորությունը և նշանակալից ազդեցությունն ակնհայտ արտահայտված է այս ժամանակահատվածի համարյա բոլոր առանցքային իրադարձություններում: Բագհաստանայի արձանագրության համաձայն, Դարեհ I-ի (մ.թ.ա. 522–486) դեմ ապստամբած թերևս ամենազորեղ և ամենահամառ երկիրը եղել է Հայաստանը: Դարեհը շատ ավելի հեշտ է հաղթահարդար տեսել Մարաստանի, Պարսքի, Պարթևստանի, Բաբելոնի, քան թե Հայաստանի հետ: 7 ամսվա ընթացքում նա հայերի դեմ տվել է 5 ճակատամարտ, որոնց հաղթական ելքը, չնայած Դարեհի հավաստիացումներին, խիստ կասկածելի է, մանավանդ որ այդ ճակատամարտերից մեկը տեղի է ունեցել Հայաստանի սահմաններից դուրս՝ Ասորեստանի հյուսիսում, իսկ մյուս ճակատամարտերի ամենահավանական վայրերը համարվում են Հայաստանի ծայր հարավային շրջանները: Դարեհի անհաջողության մյուս վկայությունն այն է, որ նա բացի Հայաստանից, մյուս ապստամբած երկրներին հաղթելու վերաբերյալ բերում է բավականին համոզիչ տվյալներ հատկապես նշելով պարտված թագավորների անունները և նրանց մահապատժի ենթարկելու մանրամասները: Հայերի զորեղության և խոշոր ազդեցության մասին հավաստում է նաև այն, որ նույն իրադարձությունների ժամանակ ապստամբած Բաբելոնի գահ է բարձրանում հայ (արմինիյա) Արաքան[20]:

Աքեմենյան շրջանում Հայաստանի հզորությունը լիովին արտահայտվում է նաև Արբելայի ճակատամարտում: Այստեղ, ինչպես ասվեց, Մեծ Հայքը գլխավորել է արյաց բանակի աջ թևը, որը ջախջախելով Ալեքսանդր Մակեդոնացու ձախ թևը, թափանցել է նրա բանակի թիկունք: Նույնիսկ Դարեհի ու ձախ թևի փախուստից հետո աջ թևը շարունակել է մարտը: Երբ թիկունքից հարվածում են նաև Ալեքսանդրի գլխավորությամբ օգնության եկած հակառակորդի մնացյալ զորամասերը, աջ թևը փաստորեն միայնակ է մնում մակեդոնական ողջ բանակի դեմ: Դրանից հետո միայն այն դիմում է նահանջի, Ռուփոսի հավաստմամբ այդպես էլ իր մեջքը ցույց չտալով հակառակորդին: Այդպիսով աջ թևը գլխավորող հայոց բանակը պահպանվեց և բնական է, որ դրանից հետո աքեմենյան դաշնությունը գլխավորող եռյակից իր անկախությունը պահպանեց միայն Հայաստանը[21]:

Ալեքսանդր Մակեդոնացին նվաճեց Հունաստանից Հնդկաստան ձգվող աքեմենյան համաշխարհային ողջ տիրապետությունը: Միակ երկիրը, որը նրա ու հետագայում Սելևկյանների կողմից հիմնականում մնաց անվաճ՝ Հայաստանն էր: Ժամանակի աշխարհի մեծ մասը իրեն ենթարկած այս հզոր ուժին դիմակայելու համար Հայաստանը պետք է տիրապետեր լուրջ

20 Գ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն. Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը. Երևան, 1964· Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Հ. Ա, Երևան, 1940, էջ 53:

21 Ռ ո ւ փ ո ս, IV, 15, 16, էջ 361-368: Ա ր ի ա ն ո ս, II, 14, 15, էջ 104-107:

ուժի, պետք է ունենար կազմակերպված, մարտունակ և բավականին մեծաքանակ բանակ: Մանավանդ եթե նկատի ունենանք, որ վերջինս Սելևկյանների հետ հիմնականում գտնվում էր ոչ թե դաշնակցային կամ հպատակ վիճակում, այլ ընդհակառակը՝ սուր հակադրության և պատերազմների մեջ: Իր անկախությունը և հզորությունը պահպանած Հայաստանի գոյությամբ էր պայմանավորված Փոքր Հայքի, Կապադովկիայի, Պոնտոսի, Պափլագոնիայի, Բիթանիայի, Մեդիայի անկախացումը և թերևս հենց պարթևների ասպարեզ իջնելը: Հայաստանը Սելևկյաններից նվաճված համարող մի քանի կցկտուր ակնարկումներն ըստ ամենայնի հիմնականում վերաբերել են Փոքր Հայքին, իսկ Մեծ Հայքը թերևս սելևկյան գերիշխանությունն ընդունել է միայն Անտիոքոս Մեծի (մ.թ.ա. 223–187) օրոք, ինչը երկար չի տևել, քանի որ Մագնեսիայի ճակատամարտից (մ. թ. ա. 190) հետո Մեծ Հայքն ու Ծոփքը անկախ են հռչակվել[22]:

Մարական, աքեմենյան, երվանդունյան և արտաշեսյան ժամանակներում Հայաստանի ունեցած ահռելի զինական ուժի, անընդմեջ հզորության ու խոշոր ազդեցության բնական արդյունք պետք է համարել այն, որ Տիգրան Մեծի օրոք Հայաստանը նվաճում է տարածաշրջանի գերադահությունը: Ըստ Պլուտարքոսի, Տիգրան Մեծի բանակի կենտրոնում հայոց զորաբանակն էր, իր՝ արքայից արքայի առաջնորդությամբ, աջում՝ մարաց, իսկ ձախում՝ Ադիաբենեի թագավորները իրենց զորքերով: Եթե այս դեպքում նույնպես զորքերի էթնիկ դասավորությունը համապատասխանել է գահային աստիճանակարգին, ապա դա կնշանակի, որ Տիգրան Մեծը հասնելով գերադահության, վերականգնել է տարածաշրջանում ընդունված գահային եռաստիճան համակարգը հայոց գերիշխանությամբ: Գերադահությունից զրկված և հայկական գերիշխանության հետ չհամակերպվող պարթևները, ըստ ամենայնի չեն ընդունել երրորդ գահը, ինչը Տիգրանը չնորհել է ադիաբենցիներին, իսկ մարերը պահպանել են երկրորդ գահը: Այսպիսի գահակարգի գոյությունը հաստատում է Խորենացին, ըստ որի Տիգրանը մարաց «երկրորդական» գահը հանձնել էր իր քրոջ ամուսին Միհրդատին: Սա նույն՝ հայոց բանակի աջ թևը գրավող Մարաստան-Ատրպատականի թագավորն է, որն ըստ Դիոն Կասիոսի, իսկապես Տիգրան Մեծի քրոջ նույնանուն ամուսինն էր: Խորենացու այլ վկայությունների համաձայն Մարաստանը Հայաստանի երկրորդ գահն է հանդիսացել նաև Երվանդունիների ու Արշակունիների օրոք[23]:

Հունահռոմեական պատմագրության համաձայն, Տիգրան Մեծն ունեցել է 250000-300000 թվաքանակ ունեցող բանակ, ինչը համարվում է չափազանցված: Բայց հավանաբար սա ոչ թե առանձին գործողությունների մասնակցած զորքերի, այլ ողջ հայոց բանակի թվաքանակն էր, ինչի վերաբերյալ Լուկուլլոսը զեկույց էր ներկայացրել Հռոմի սենատ: Այն չափազանցված չի համարվի, եթե նկատի առնենք, որ այս ժամանակներում Հայաստանը իրենից ներկայացրել է բազմաթիվ երկրների դաշնակցություն,

---

22 Այս հարցի հանգամանալից վերլուծությունը տե՛ս Հ. Մանանդյան. նշվ. աշխ., հ. Ա, էջ 86–124:

23 Տե՛ս ՀԺՊՔ, էջ 240-241 (Պլուտարքոս, XXVII): Խորենացի, II, Ը, ԽԴ, ՁԷ, էջ 127, 200 288: Հ. Մանանդյան. նշվ. աշխ., հ. Ա, էջ 150 (Դիոն Կասիոս. Հռոմեական պատմություն, XXXVI, 14):

որի բանակը կազմված էր ոչ միայն Հայաստանի, այլև հպատակ երկրների զորքերից[24]:

Անկախ նրանից, թե որքանով են իրականությանը համապատասխանում ներկայացված թվերը, փաստն այն է, որ տվյալ ժամանակներում Հայաստանը ունեցել է Առաջավոր Ասիայի ամենազորեղ և բազմաքանակ բանակը, որն ըստ Պլուտարքոսի խորտակել էր պարթևների հզորությունը, ինչը մինչ այդ «դեռևս չէր հաջողվել ուրիշ մեկին», փակել էր «պարթևների ուղին դեպի Փոքր Ասիա», «զավթել էր Ասորիքն ու Պաղեստինը», հպատակեցրել էր բազմաթիվ թագավորների[25]: *Այս հզորությունը Տիգրան Մեծը միանգամից չէր կարող ստեղծել: Ներկայացված տվյալներից հետևում է, որ արտաշեսյան հզոր Հայաստանը հետնորդն էր նույնպիսի հզորություն ունեցող երվանդյան Հայաստանի, որի հզորությունն իր հերթին ժառանգվել էր աքեմենյան և մարական ժամանակներից, երբ Հայաստանն ուներ տարածաշրջանի քանակով երրորդ բանակը:*

Հայաստանն ըստ ամենայնի գերագահության է հասել նաև Ասանյանների ասպարեզ իջնելու ժամանակներում: Վերջիններիս կողմից առաջին գահին տիրող պարթև Արշակունիների կործանումով, արյաց դաշնությունը գլխավորելու իրավունքը հավանաբար իրենց են վերապահել մինչ այդ երկրորդ գահը գրավող հայ Արշակունիները: Ըստ Ագաթանգեղոսի ու Խորենացու, Խոսրով Մեծ-Տրդատ II-ը (217-252) ջախջախելով Սասանյան Արտաշիրին, ինչպես տարածաշրջանի գերագահությունը ժամանակին իրեն վերապահած և Միջագետքի հյուսիսն ու արևմուտքը գրաված Տիգրան Մեծը, նախ գրավում է «մինչև ի գրունս Տիսբոնի» կամ «զԱսորեստան և այլ արքայանիստ աշխարհս», ինչը հավանաբար գերագահությանը տիրելու հիմնական պայմաններից մեկն էր: Այնուհետև պատգամ է ուղարկում և իր մոտ կանչում «սլարթև և Պահլաւիկ ազգս», նրանցից արժանավորին պարթև թագավորի փոխարեն թագավորեցնելու համար: Ագաթանգեղոսի ուղղակի հավաստմամբ, ինչը կրկնում է վրաց պատմագրությունը, Հայաստանը այդ ժամանակ գրավել է Արշակունյաց առաջին գահը, քանի որ հայոց Խոսրով Մեծը իր մոտ ապաստանած «Պարթևաց տէրութեան գլխաւոր նահապետ» գավազիր Անակին, պատվելով «ըստ օրինաց թագաւորաց», նրան բաղմեցնում է ոչ թե առաջին գահին, ինչին մինչ այդ տիրում էին պարթևները, այլ արգեն «յերկրորդ աթոռ թագաւորութեանն»:

Հզորության այս թռիչքները պահային չէին: Հռոմի ու Պարթևստանի, այնուհետև Սասանյանների շահերի բախման կենտրոնում հայտնված Հայաստանը, Տիգրան Մեծի գերագահության հասնելուց հետո, մինչև այս տիրապետությունների միջև բաժանվելը, շարունակում էր մնալ ժամանակի աշխարհի կամ տարածաշրջանի երրորդ պետությունը, որը երկու ամենազորեղ տերությունների միջև սեղմված, ոչ միայն դիմադրում էր, այլև հայ և առավելապես օտար աղբյուրների համաձայն, որոշ դեպքերում

---

24 Տե՛ս ՀԺՊՌ, էջ 232, 238, 239 (Պ լ ո ւ տ ա ր ք ո ս, XXI, XXVI), 256, 258 (Ա պ պ ի ա ն ո ս. Հռոմեական պատմություն, XI, 48, XII, 85), ՕԱՀՀՄ. Հին հունական աղբյուրներ: Ա. Հ ո վ ս ե պ ո ս Փ լ ա վ ի ո ս. Հրեական հնախոսություն, հ. 9, XIII, 419, Երևան, 1976, էջ 67:

25 Տե՛ս ՀԺՊՌ, էջ 230, 232 (Պ լ ո ւ տ ա ր ք ո ս, XXI, XIV), 256 (Ա պ պ ի ա ն ո ս, XI, 48):

ջախջախիչ հակահարվածներ տալիս վերջիններիս: IV դարից ավանդված զորացուցակների և հետագա այլ աղբյուրների համաձայն, Հայաստանը դեռևս հզոր և 120000-ի հասնող բանակ ունեցող պետություն էր: Անհրաժեշտ է նկատի առնել, որ Տիգրանակերտի ճակատամարտից (մ.թ.ա. 69) սկսած, 4 հարյուրամյակից ավելի, Հայաստանը բախվել էր ողջ «Արևմտյան աշխարհին» տիրող Հռոմի հետ, որին ի վիճակի չէր դիմադրել և ի վերջո կործանվեց նաև Պարթևստանը: Իսկ երբ Հռոմից բացի, Թիկունքից սկսեց հարվածել 224 թվից Պարթևքին փոխարինած Սասանյան պետությունը, լրջորեն խարխլվեց և ի վերջո վլուզվեց նաև Հայաստանը[26]*:*

Հռոմի ասպարեզ իջնելուց առաջ, Պարթևստանի ու Պոնտոսի հետ «արևի տակ հզորագույն 3 տերություններից» *մեկը համարվող Հայաստանը, ժամանակի առաջնային տերություններից մեկն էր նաև իր գրված տարածքով, ինչի մասին է վկայում Պոմպեոս Տրոգոսը (Հուստինոսի միջնորդությամբ) իր հայտնի բնութագրումով.* «Չի կարելի լռությամբ անցնել այնպիսի մեծ թագավորության կողքով, ինչպիսին է Հայաստանը, քանի որ նրա սահմանները, Պարթևստանից հետո, իրենց ընդարձակությամբ գերազանցում են բոլոր մյուս թագավորությունների սահմանները»*: Հայաստանը ազգաբնակչության քանակով նույնպես հանդիսացել է տարածաշրջանի երեք առաջնային երկրներից մեկը: Ստրաբոնի հավաստմամբ* «մարերը, հայերը և բաբելացիք աշխարհի այս մասի ամենամեծ ժողովուրդներն են»[27]*:*

Ներկայացված տվյալներից հետևում է, որ Հայաստանը Ասորեստանի գոյության վերջին շրջանից մինչև հայ Արշակունիների անկումը, ունեցել է անընդմեջ հզորություն և առաջնային տեղ է գրավել Առաջավոր Ասիայում: Սելևկյանների վերջնական կործանումով նպաստավոր քաղաքական պայմաններ ստեղծվեցին ընդարձակվելու և Առաջավոր Ասիայում գերագահության հասնելու համար: Հայաստանն օգտվելով նպաստավոր իրավիճակից, տարածաշրջանի գերիշխանությունը իրեն վերապահելով, ստանձնեց այն: Բայց նույն՝ Տիգրան Մեծի ժամանակներում քաղաքական իրավիճակը կտրուկ շրջվեց ի վնաս Հայաստանի, քանի որ այն հայտնվեց ժամանակի երկու հզոր տիրապետությունների՝ Հռոմի և Իրանի միջև: Երկու հակադիր կողմերում գտնվող ճակատներով պայքարող Հայաստանն ըստ էության դատապարտված էր ջլատման ու անկման: Ծանր, երկարատև և անհավասար պայքարում Հայաստանը աստիճանաբար զիջեց իր առաջնային դիրքերը տարածաշրջանում, ինչն ի վերջո V դարում հանգեցրեց հայոց պետականության տևական կորստին:

---

26 Տե՛ս ՀԺՊՔ, էջ 392, 393 (Դիոն Կասիոս, 78, XXI(1), 80, III(1-3)), 454 (Եվսեբիոս Կեսարացի. Եկեղեցական պատմություն, IX, 8), 617-618 («Զորանամակ»): Բոզանդ, IV հէ, էջ 228:

27 Տե՛ս ՀԺՊՔ, էջ 243, 245 (Պլուտարքոս, XXVIII, XXX), էջ 220 (Հուստինոս, XLII, 2 (7–9)): Страбон, XVI, 1 (19), с. 691: *Հ. Մանանդյանը այս հատվածի վերաբերյալ առանց որևէ հիմնավորման գրում է, որ խոսքը գնում է սոսկ Ադիաբենեի ազգությունների մասին (Հ. Ա, էջ 150), թեև իրականում Ստրաբոնը այս պարբերությունում և հենց նույն նախադասության մեջ բացահայտորեն խոսում է ողջ տարածաշրջանի երկրների ու ժողովուրդների փոխհարաբերությունների մասին:*

* * *

Ներկայացված տվյալների համաձայն, Ասորեստանի կործանումից հետո մարաց, այնուհետև աքեմենյանների գլխավորությամբ Առաջավոր Ասիայում իր գերիշխանությունն է հաստատել մի դաշնային միավոր, որը սահմանված գահակարգով գլխավորել են 3 ազգեր՝ մարերը, պարսիկները և հայերը: Այստեղ հարց է առաջանում, թե ինչու՞ Հայաստանը տեղ է գրավել առաջնայինների գահակարգում, բայց նախորդ ժամանակների ամենազորեղ տիրապետությունը՝ Ասորեստանը, որն ընդգրկված էր նույն երկրների կազմում, տեղ չի գտել այս գահակարգում: Սա ենթադրել է տալիս, որ Հայաստանի և իրանական երկրների կազմած դաշինքները հիմնված էին մարերի, պարսիկների ու հայերի էթնիկ ազգակցության վրա: Դա ընդգծում է Քսենոփոնը, որը բավականին մանրամասն թվելով Կյուրոսին հպատակված ժողովուրդներին, որոնց մեջ չկան մարերն ու հայերը, այնուհետև ավելացնում է. «Նա իշխեց այս բոլոր ազգերի վրա, որոնք իրեն համալեզու չէին»: Արիական առաջնային եռյակից մարերի և պարսիկների սերտ ցեղակցությունը անվիճելի և հավելյալ հիմնավորում չպահանջող իրողություն է: Ինչ վերաբերում է այս ժողովուրդներին հայերի ազգակցությանը, ապա գա նախ հաստատում է լեգվաբանությունը, որի համաձայն, հայերենն ու հունարենը իրանական լեզուների հետ տրոհվել են հնդեվրոպական նախալեզվի միևնույն ենթաճյուղից: Այս իրողությունը հայտնի էր դեռևս Ատրաբոնին, ըստ որի «մեղացիները և հայերը ցեղակից են միմյանց, ինչ որ չափով նաև թեսալացիներին և Յասոնի ու Մեդեայի սերունդներին»: Նա նաև ընդգծում է, որ մարաց, հայոց և պարսից սովորույթներն ու դիցական ավանդները մեծամասամբ նույնն են[28]:

Մարերի ու պարսիկների հետ նույն արիական ընդհանրությանը հայերի պատկանելությունն է հաստատում Խորենացին, ըստ որի եթե մարաց թագավոր Աժդահակին սպաներ Տիդրանը, ապա հայոց թագուհին կդառնար «թագուհեաց թագուհի ի վերայ Արյաց»: Այդպիսով Հայաստանը ներկայացված է որպես համաարիական դաշնության բաղկացուցիչ սուբյեկտներից մեկը, որի թագուհին, հետևաբար և թագավորը, կարող էին իշխել արյաց ողջ տերության վրա: Ըստ երևույթին առաջնային եռյակի ժողովուրդները նախապես կրել են «արիներ» հավաքական էթնանունը, որով հետագայում հիմնականում կոչվել են պարսիկները: Սա թերևս արիական դաշինքում Պարսկաստանի ունեցած առավել տևական գերիշխանության հետևանք է: Նախնական ընդհանուր էթնանվան դոյությունը հաստատում է Հերոդոտոսը, ըստ որի մարերը նախապես կոչվել են «արիներ»: Հնարավոր է, որ նույն անվանումից է ծագում օտարների կողմից հայերին տրվող «արմեն» էթնանունը: Այս տվյալները ենթադրել են տալիս, որ նախապես գոյություն է ունեցել հնդեվրոպական նախալեզվից տրոհված «արի» կոչվող էթնիկ ընդհանրություն, որի ճյուղավորումներից առաջացած արիական ժողովուրդները չարունակելով պահպանել որոշակի միասնություն, կազմել են մեկ դաշնակցային միավոր: Սա ակնհայտ է ողջ «Կյուրո-

---

28 Կյուրոպեդիա, VII, 5(52), էջ 297: С т р а б о н, XI, 13(9), 14(14, 16), с. 495, 500, 501; Т. Г а м к р е л и д з е, В. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы. Тбилиси, 1984, с. 898, 899.

պեդիայում»: Այս երկում ներկայացվում է մի բախում, որը տվյալ ժամանակների մասշտաբով համաշխարհային պատերազմ էր: Բախման մի կողմում մարերի, պարսիկների ու հայերի գլխավորած արիական խմբավորումն է և նրանց միացած, թերևս նույն՝ արիական ընդհանրությունից ծագող սակերը, կադուսիներն ու հյուրկանները, իսկ մյուս կողմում «ամբողջ աշխարհը»՝ Ասորեստանի գլխավորությամբ: Արիական դաշինքը հաղթելով ասորեստանյան խմբավորմանը, նվաճում է տարածաշրջանի գերիշխանությունը: Այս նպատակագրումը ընդգծված է դաշնակիցներին ուղղված Կյուրոսի հետևյալ խոսքում. «մենք մեր հպատակների նկատմամբ անձնական գերազանցությամբ պետք է նվաճենք իշխելու իրավունքը»: Այս տվյալներից ակնհայտ է, որ մարաց և աքեմենյանների գլխավորած տիրապետությունները դրանք մարա-պարսկա-հայկական արյունակցության վրա հիմնված արիական դաշնություններ էին: Պարթևները իրենց հռչակելով աքեմենյանների ժառանգներ, ըստ էության այս դաշինքի մեջ ընդգրկվեցին նույն՝ արյունակցության սկզբունքով[29]:

Արծարծված քննությունից հետևում է նաև հետևյալ հարցադրումը:

Առկա տվյալների համաձայն, առաջնային էթնիկ եռյակում կամ քառյակում տեղ գտած թե՛ մարերը, թե՛ պարսիկները և թե՛ պարթևները, բացի հայերից, ինչ-որ ժամանակ գերիշխանության են հասել և գրավել տարածաշրջանի առաջին գահը: Թերևս հենց դրանով է պայմանավորվել այդ էթնոսների ընդգրկումը առաջնային էթնիկ աստիճանակարգում: Դա է հաստատում պարթևների պարագան, որոնք առաջնայինների մեջ ընդգրկվեցին գերիշխանության հասնելուց հետո միայն: Սա ենթադրել է տալիս, որ հայերը նույնպես ինչ-որ ժամանակ գերիշխանության են հասել տարածաշրջանում, ինչն էլ կարող էր ապահովել Հայաստանի հաստատուն տեղը հզորների եռյակում: Իհարկե, Տիգրան Մեծը մ. թ. ա. I դարում հասել է գերիշխանության, բայց Հայաստանը հզորների եռյակում ընդգրկված էր դրանից շատ առաջ, ինչպես ասվեց, դեռևս մարական գերիշխանության ժամանակներում: Սա նշանակում է, որ Հայաստանը կարող էր գերիշխանություն ունեցած լինել նաև մինչև Տիգրան Մեծը, նույնիսկ մինչև աքեմենյան գերիշխանությունը: Հայոց գերիշխանության հենց այս ժամանակներն է մատնանշում Խորենացին. մարաց Աժդահակի դեմ դուրս եկած Տիգրան Երվանդյանը հետապնդում է գերիշխանության հասնելու անթաքույց նպատակ: Նրա հաղթանակի դեպքում հայոց թագուհին կդառնար «թագուհեաց թագուհի ի վերայ Արյաց», հետևարար հայոց թագավորը կնվաճեր արյաց գերիշխանությունը, ինչն էլ տեղի է ունենում. Տիգրանը «օժանդակ կամօք և յոժարութեամբ Կիւրոս ունելով զիշխանութիւն մարաց և պարսից յինքն յափշտակեաց»: Անհայտ աղբյուրից օգտված Ներսես Պալիենցին նույն ժամանակների վերաբերյալ ունի այսպիսի պատկերացում. «Կիւրոս բարձեալ զիշխանութիւնն յորս և էին Հայոցն ընդ Մարացն»[30]: Այս վկայություններից ենթադրելի է, որ աքեմենյաններից առաջ

29 Խորենացի, I, ԻԸ, ԻԹ, էջ 92, 94: Հերոդոտոս, VII, 62, էջ 407: Կյուրոպեդիա, I, 1(4, 5), էջ 5 VII, 5(78), էջ 303:

30 Խորենացի, I, ԼԱ (ԼԲ), էջ 102: Ներսես Պալիենցի. Իշխանութիւն և թագաւորք Հայոց.– Մանր ժամանակագրություններ. հ. 2, էջ 200:

հայերը գերիշխանություն են ձեռք բերել մարերի ու պարսիկների նկատմամբ կամ մարերի հետ գերիշխել են համատեղ:

Եթե Հայաստանը Մարաստանից իսկապես խլել է գերիշխանությունը, ապա այն կարող էր շատ կարճ լինել: Բայց Հայաստանի հաստատուն և տևական տեղը հզորների եռյակում, պարտադրում է հայոց երբեմնի գերիշխանությունը փնտրել նաև մինչև մարաց գերիշխանության հաստատումը, ինչը կարող էր լինել արգեն ուրարտական ժամանակներում: Հավանական է, որ ուրարտական պետության տևական հզորությունը և առաջնային դիրքն է հետագայում ապահովել Հայաստանի հաստատուն տեղը հզորների շարքում: Այս առումով անհրաժեշտ է նկատի առնել այն, որ Ասորեստանի «Եղբայր» կամ «Որդի» Ուրարտուն, կամ Նինոսի «Երկրորդ» Արամ Նահապետի Հայքը, տարածաշրջանի գահակարգում գրավել են այն նույն տեղերը, որոնց հետագայում տիրում էր Հայաստանը:

Նախորդ վերլուծություններն ու պարզաբանումները նորովի պատկերացում են տալիս նաև արիական դաշնությունների կառավարման համակարգի վերաբերյալ: Ըստ ամենայնի այս հարցում առանցքային պայման է հանդիսացել դաշնակից կողմերի իրավահավասարությունը: «Կյուրոպեդիայի» համաձայն, ի տարբերություն «պետական իրավակարգում» բռնակալական բաբքեր ունեցող մարերի, «հավասար իրավունքները», արդարությունն ու օրինապահությունը հատուկ էին պարսից հանրությանը: Թեև դրանք համաարիական սկզբունքներ էին. այն առաքինությունները (արդարադատություն, քաջություն, մեծահոգություն), որոնք Քսենոփոնը վերագրում է Կյուրոս Մեծին, ըստ Կտեսիասի ընորոշ էին մարաց թագավորներին: «Կյուրոպեդիայում» թե մարական, թե աքեմենյան ժամանակներում Կյուրոս Մեծի շուրջը համախմբված երկրները ներկայացված են «համախոհ» ազգերի ու երկրների կամավոր համաձայնությամբ ստեղծված դաշնակցություններ: Ոչ միայն առաջնային էթնիկ եռյակի, այլև այդ դաշինքի մեջ ընդգրկված մյուս մեծ ու փոքր կողմերի ներկայացուցիչները, այդ թվում Կյուրոս Մեծը, միմյանց են դիմել «դաշնակից այրեր, ընկերներ, բարեկամներ» կոչումներով: Արիական դաշնությունների հիմնական միավորների միջև հավասարության այս կարգը, հայ պատմագրության համաձայն, առկա էր նույնիսկ սասանյան ժամանակներում, ինչին հետևելով, պարսից և հայոց թագավորները «ի միասին ի միում տախտի դահուն բազմէին» և կրում էին «զմիօրինակ, զմիադույն» հանդերձանք, զարդեր ու թագեր: Հավանաբար, հավասարության այս սկզբունքով թելադրված, արիական դաշնությունների դերիշխանությունը պատկանել է ոչ թե գլխավորող էթնիկ միավորներից որևէ մեկին, այլ համաարյաց արքայից արքային: Դաշնակիցների կամավոր համաձայնությամբ «Միապետ» ճանաչված Կյուրոս Մեծի ենթակայության տակ էին գտնվում դաշնակից երկրների արքաները, այդ թվում Պաբսքի թագավորը, որը Կյուրոսի գերագահության ժամանակներում դեռևս հանդիսանում էր նրա հայրը Կամբյուսեսը: Աքեմենյան շրջանում կառավարման այսպիսի համակարգի գոյությունը հաստատում է նաև Խորենացին, ըստ որի Առաջին Արտաշեսը, որի կերպարի տակ իրականում թաքնված է նախապես հայոց տիրակալ, իսկ հետագայում աքեմենյան արքայից արքա Դարեհ III Կոդոմանոսը (մ.թ.ա. մոտ 359-336-330), թողնելով հայոց գահը, տիրում է «զնախա-

գահութիւնն», այսինքն գերագույն գահին, և «զԱրշականն ընդ իւրով ձեռամբ կացուցաներ թագաւոր Պարսից, որպես զՏիգրան որդի իւր՝ Հայոց»: Այսինքն համաարյաց արքայից արքան իր ենթակայության տակ գտնվող երկրների հետ թագավոր է կարգել նաև իր բուն երկրում: Այս տվյալներից ենթագրելի է, որ աքեմենյան և մյուս արիական տիրապետությունները ունեցել են դաշնային բնույթ, որոնց գերիշխանությունը, ավանդված կանոնակարգով, պատկանել է ոչ թե Պարսկաստանի կամ այլ երկրի թագավորի, այլ համաարիական արքայից արքային[31]:

Արիական դաշնությունների կառավարման կարգերը տարբեր ժամանակներում որոշակի փոփոխությունների են ենթարկվել, բայց նախնական հիմնագրույթներն ըստ էության պահպանվել են: Ըստ «Կյուրոպեդիայի», Պարսքի թագավոր Կամբյուսեսի առաջարկությամբ Կյուրոսի և «պարսից իշխանավորների» միջև կայացած համաձայնությամբ, համաարյաց արքայից արքան հոր մահից հետո պետք է դառնար նաև Պարսքի թագավոր: Հետագայում համաարյաց արքայից արքաները միաժամանակ իրենց բուն երկրների թագավորներն էին: Ասսանյան Շապուհ I-ը իրեն համարում է Երանի և Աներանի արքայից արքան և միաժամանակ Իրանշահրի տիրակալը: Բայց այս համատեղումը նախապես սահմանված կանոնակարգի էական փոփոխություն չի կարելի համարել, որովհետև թեև համատեղված պահպանվել են թե՛ համաարյաց արքայից արքայի և թե՛ նրա բուն երկրի թագավորի պաշտոնները[32]:

Այսպիսով, բավականին վստահ կարելի է պնդել, որ Ասորեստանի կործանումից մինչև աբաբներ, ողջ Առաջավոր Ասիան կամ գրա մեծ մասը գտնվել է մեկ դաշնային միավորի և կառավարման մեկ համակարգի ներքո: «Կյուրոպեդիայի» համաձայն, այս հսկա տարածաշրջանը Կյուրոսի հաստատած սույն աշխարհակալգով, կենտրոնացված էր համաարյաց արքայից արքայի ձեռքում: Այս և հետագա աղբյուրների համաձայն, կառավարման այս հսկա բուրգի գագաթին գտնվող արքայից արքային ենթակա են եղել 3 էթնիկ գահեր, որոնք նույն կարգով իրագործել են իրենց իշխանության ներքո գտնվող «բուրգերի» կառավարումը: Գահային նույնակարգ կառավարումը առանձին օղակներով առկա է եղել արիական դաշնային կազմավորումների հավանաբար բոլոր մեծ ու փոքր սուբյեկտներում: Հայ միջնադարյան պատմագրության համաձայն, նույն կարգով Հայաստանում և Պարսկաստանում իշխանությունը աստիճանակարգված էր նախարարների թվին ու նրանց զինուժին համապատասխան, թագավորին ենթակա գահերի միջև[33]:

---

31 Կյուրոպեդիա, I, 3(18), էջ20: III, 3(12), էջ 119: V, 3(29), 5(20, 45, 46), էջ 197, 219, 224: VI, 1(6, 10, 18), էջ 227, 228, 230: VII, 5(41, 42, 50, 73), էջ 295, 297, 302, VIII, 1(3-6), 3(1), 4(28), 5(21-28), էջ 306, 307, 326, 345, 351-353: Դ ի ո դ ո ր ո ս, II, 24(1), 28(1, 5, 6), 32(2, 3), էջ 32, 37, 41: Խ ո ր ե ն ա ց ի, II, ԺԱ, ԺԹ, էջ 152, 138: Բ ա ն դ, IV, ԺԶ, ԾԴ, էջ 194, 258-260: Մ. Օ հ ա ն յ ա ն. Մար Աբասյան աղբյուրի ծագումը և Մովսես Խորենացու Հայոց պատմությունը.– «Պատմա-բանասիրական հանդես» (ՊԲՀ), 1996, N 1-2:

32 Կյուրոպեդիա, VIII, 5(21-27), էջ 351-353: В. Г. Л у к о н и н. Նշվ. աշխ., էջ 137, 218:

33 Կյուրոպեդիա, VIII, 1(6, 7), 8(1), էջ 307, 308, 366: Խ ո ր ե ն ա ց ի, III, ԾԱ, ԿԵ, էջ 398-400, 438: Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն. Սյունիքի պատմություն. Թ, Երևան, 1986, էջ 83: Ն. Ա դ ո ն ց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. Երևան, 1987, էջ 303-304:

Առաջավոր Ասիա ներխուժած Ալեքսանդր Մակեդոնացին փորձեց պահպանել տարածաշրջանի կառավարման այս համակարգը: Նա Իսոսի հաղթությունից հետո Դարեհ Վերջինին առաջադրեց այս հարցը իրեն վերապահելով առաջին, իսկ նրան առաջարկելով երկրորդ գահը: Այն մերժվեց վերջինիս կողմից, որը համաձայն էր առավելագույնը հավասարության կարգավիճակի[34]: Հետագայում Սելևկյանները, իսկ նրանցից հետո Հռոմը, հավանաբար միայն իրենց էին վերապահում Ալեքսանդրի կողմից հաստատված գերադահության իրավունքը՝ ըստ ամենայնի չկարևորելով մյուս աստիճանակարգումները: Մակեդոնացու ներխուժումով, ըստ էության հաստատվել էր նոր՝ հելլենական աշխարհակարգ: Արիական նախկին կառավարման համակարգը Սելևկյանների կործանումից անմիջապես հետո, ինչպես ասվեց, իր նվաճումների սահմաններում վերականգնեց տարածաշրջանում գերիշխանության հասած Տիգրան Մեծը, որից հետո այն հաստատելու պայքարը հիմնականում գլխավորել են պարթև Արշակունիները:

Արիական դաշնությունը, բայց արդեն պարսից, հայոց և պարթևաքուշանաց գլխավորությամբ, ինչպես ասվեց, պահպանվում էր Սասանյանների գերադահության առաջին շրջանում: Վերջիններս ըստ էության վարում էին Եոյակ դաշինքը մեկ էթնիկ միավորի գերիշխանության վերածելու քաղաքականություն: Բայց ուժի ու ղրադաշտականության պարտադրումով այն շատ ավելի կենտրոնացված ու «պարսկականացած» դարձնելու Սասանյանների ջանքերը անհաջողության մատնվեցին: Արդյունքում կրոնաքաղաքական խորը հակադրությունների մեջ գտնվող արիական դաշնությունը վերջնականապես փլուզվեց, և իր շուրջ 13-դարյա գերիշխանությունը տարածաշրջանում (մ.թ.ա. 609-մ.թ.651), որոշ ժամանակ կորցնելով կամ կիսելով Սելևկյանների, Հռոմի ու Բյուզանդիայի հետ, ի վերջո զիջեց արաբներին:

* * *

«Կյուրոպեդիայի» վերջում հաղորդվում է, որ Կյուրոսը «մեդացիների, արմենների և կադուսիների» սատրապ է նշանակում կրտսեր որդուն՝ Տանաոքսարեսին: Քսենոփոնի այս հաղորդումը չի համադրվում նախորդ տվյալներին, որոնց համաձայն թե՛ մարաց գերիշխանության ժամանակ, թե՛ Կյուրոսի գերագահության սկզբում, Մարաստանը, Պարսքն ու Հայաստանը ունեին թագավորության կարգավիճակ: Քսենոփոնի այս և մյուս երկում՝ «Անաբասիսում», Հայաստանը չի հիշատակվում ո՛չ Կյուրոսի նվաճած երկրների, ո՛չ նրա հաստատած սատրապությունների ցուցակներում: Նա «Անաբասիսում» հայտնում է, որ Օրոնտասին է պատկանում Հայաստանի իշխանությունը, բայց նրան սատրապ չի կոչում: Սատրապների ցանկերից մեկում նա հիշատակում է միայն Արևմտյան Արմենիայի հյուպարքոս Տիրիբազոսին, որը այլ աղբյուրից օգտված Դիոդորոսի համաձայն, ողջ Հայաստանի սատրապն էր: Բայց դրանցից ոչ մեկում նա չի հիշատակում Օրոնտասին: Հետագայի հունահռոմեական աղբյուրներում Հայաստանը համարվում է սատրապություն, բայց Օրոնտաս-Երվանդ II-ի

34 Ռ ո ւ փ ո ս, IV, 11 (22), էջ 349: Ա ր ի ա ն ո ս, II, 14(9), 25(3), էջ 73, 86:

(V–IV դդ.) պահպանված ոսկեդրամը, նրա թագավորի իրավասություններ ունենալու լուրջ վկայություն է, քանի որ ոսկեդրամ ձուլելու իրավունքը վերապահվել է միայն արքաներին[35]:

Այս և շատ այլ անհամաձայնություններից ակնհայտ է, որ հին հունական և հետագայի աղբյուրները, աքեմենյան տիրապետության բնույթի ու կառուցվածքի վերաբերյալ ունեցել են ոչ այնքան ստույգ պատկերացումներ, ինչը պարտադրում է փնտրել սույն խնդրին առնչվող հավելյալ տվյալներ: Այստեղ կարևոր լրացում են կատարում Խորենացու այն տվյալները, որոնք «ժամանակագրական առումով» վերագրված են պարթև Արշակունիներին, բայց իրականում վերաբերում են Աքեմենյաններին[36]: Խոսքը հատկապես գնում է Իրանի և նրա գերիշխանության տակ գտնվող Հայաստանի սահմանները Հունաստան ու Պաղեստին հասնելուն վերաբերող հետևյալ հաղորդմանը. «Պարսից և Պարթևաց» թագավոր Արշակ Մեծը, իր եղբորը՝ Վաղարշակին թագավոր է կարգում Հայաստանի վրա «եւ քաղաք թաղաւորութեան տայ նմա Մծբին, և սահմանս հատանէ նմա զմասն ինչ յարեւմտեաց Ասորւոց և զՊաղեստին և զԱսիա և զամենայն Միջերկրայս և զԹեսալիա, ի ծովեն Պոնտոսի մինչև ի տեզին՝ ուր Կաւկաս յարեւմտեանն յանգի ի ծով, և զԱտարպատական»: Այսպիսի ընդգրկում ունեցող Հայաստանի վերաբերյալ հիշատակումը եզակի չէ: Անհայտ աղբյուրից օգտված կիլիկյան պատմագիր Վարգան Այգեկցու (XII–XIII դ.) համաձայն, «առաջին իմաստունները, որոնք կռապաշտ էին», աշխարհը բաժանել են 7 մասի: «Վերին Հայք» կոչվող այդ բաժիններից մեկի սահմանները «Դարբանդի դռնից» ու «Վրաց տնից» հասել են Կոստանդնուպոլիս ու Սինայի անապատ, այսինքն էականում համապատասխանել են ըստ Խորենացու Վաղարշակի թագավորության ներքո գտնվող Հայաստանի սահմաններին: Նույն շարքին է վերաբերում «Աշխարհացույցի» վկայությունն այն մասին, որ «Արտաշես» անվամբ թագավորի գլխավորությամբ հայոց բանակը հասել է Հունաստան, իսկ Շիրակի պատրիկ Ներսեհ Կամսարականը գարձել է Աֆրիկայի Միջերկրականի ափերին գտնվող 3 քաղաքների իշխանը[37]:

Խորենացուց մեջբերված հատվածի քննությունը հանգեցրել է նրան, որ այն կարող է լինել միայն աքեմենյան ժամանակների արձագանք[38]: Նույնը վերաբերում է Այգեկցու և «Աշխարհացույցի» հաղորդումներին: Սա առավել լուրջ հիմնավորում է ստանում այս և հայ պատմագրության այլ տվյալները աքեմենյան շրջանին վերաբերող օտար աղբյուրների հետ համադրելուց:

Քսենոփոնի համաձայն, աքեմենյան Արտաքսերքսես II-ի փեսա Օրոնտասը, մ.թ.ա. 401 թվին Հայաստանի տիրակալն էր: Հետագայում, մինչև

---

35 Անաբասիս, III, V(17), էջ 81, VII, 8(25), էջ 197: Կյուրոպեդիա, I, 1(4), էջ 5, VIII, 5(17-20), 6(7), 7(11), էջ 350, 351, 355, 362: Դ ի ո դ ո ր ո ս, XIV, 27(7), էջ 66: А. Н. З о г р а ф. Античные монеты. – Материалы и исследования по археологии СССР, М.–Л., 1951, с. 42; М. М. Д ь я к о н о в. Очерки истории древнего Ирана, М., 1961, №16, с. 91.

36 Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին. Երևան, 1966, էջ 200: ՀԺՊ, հ. 1, էջ 505-506:

37 Խ ո ր ե ն ա ց ի, I, Ը, էջ 34: Վ ա ր դ ա ն Ա յ գ ե կ ց ի. Խրատներ. Երևան, 1999, էջ 190: Անանիա Շիրակացի. Աշխարհացույց. Երևան 1979, էջ 275, 276:

38 Մ. Օ հ ա ն յ ա ն. Նշվ. աշխ.:

360-ական թվականները, ըստ Դիոդորոսի, նա Փոքր Ասիայի ծայր արևմուտքում էր, որտեղ ստանձնելով ցամաքային զորքերի հրամանատարությունը, անցնում է Կիլիկիա և գլխավորում Կիպրոսի դեմ պատերազմը: Այնուհետև Օրոնտասը ներկայացվում է որպես Մյուսիայի սատրապ, որն ընտրվում է ապստամբած ողջ Փոքր Ասիայի և արևմտյան ծովափնյա Միջագետքի զորքերի ընդհանուր հրամանատար: Բայց ապստամբությունը անհաջողության է մատնում, ակնկալելով նույն երկրամասերի իշխանությունը ստանալ աքեմենյան արքայից[39]:

Այս հաղորդումները կարևոր են հատկապես նրանով, որ հաստատում են ողջ Փոքր Ասիան ու Արևմտյան Միջագետքը մեկ իշխանավորի, հատկապես հայոց տիրակալի իշխանության տակ գտնվելու հնարավորությունը, ինչի մասին վկայում է հայ պատմագրությունը: Բացի այդ ենթադրելի է, որ այդ երկրամասերը մինչև ապստամբությունը նույնպես գտնվել են Օրոնտասի իշխանության տակ, ինչի հաստատում պետք է համարել այն, որ նրան է հանձնարարվել այստեղ ծավալված ռազմական գործողություններում ողջ ցամաքային զորքերի հրամանատարությունը: Նա հավանաբար ապստամբել է այս երկրամասերը իր իշխանության տակ պահելու համար, ինչին ակնհայտորեն հավակնում էր արքայից արքայի համակրանքը վայելող, մինչ այդ Հայաստանի կամ նրա մի մասի կառավարիչ համարվող Տիրիբազոսը: Այս և հայ պատմագրության վերոհիշյալ տվյալների համադրումից նաև ենթադրելի է, որ Օրոնտասը միաժամանակ եղել է Հայաստանի, Մյուսիայի և ողջ Փոքր Ասիայի ու Արևմտյան Միջագետքի տիրակալը, ոչ թե ամեն անգամ թողել է դրանցից մեկը և ստանձնել մյուսը: Երբ Քսենոփոնը նրան հանդիպել է Հայաստանում, ապա կարծել է, թե Օրոնտասը միայն Հայաստանի տիրակալն է: Նույն կերպ, երբ վերջինս հայտնվել է Կարիայում, Մյուսիայում, Կիլիկիայում կամ իր ընդարձակ տիրակալության տակ գտնվող որևէ այլ երկրամասում, ապա աքեմենյան կառավարման կառույցը ոչ լիարժեք ճանաչող դիտորդին թվացել է, որ նա միայն տվյալ երկրամասի տիրակալն է կամ դրանցում հայտնվել է ինչ-որ պահային խնդիրներ լուծելու համար: Այս ենթադրությանը համահունչ է նաև այն, որ Օրոնտասի և ըստ ամենայնի միայն բուն Հայաստանի սատրապ, նրան ենթակա Տիրիբազոսի դրամները հատվել են Փոքր Ասիայի ծայր արևմտյան քաղաքներում և Կիլիկիայում:

Օտար աղբյուրները հավաստում են նաև հայոց ազդեցության Աֆրիկա հասնելու հայ պատմագրության վկայությունները: Հռոմեացի պատմագիր Սալուստիոսի (մ.թ.ա. I դ.) համաձայն, Աֆրիկայի հյուսիսային և Պիրենեյան թերակղզու հարավային ափերը առաջինը գրավել են նավերով այնտեղ հասած մարերը, պարսիկներն ու հայերը[40]: Անորոշ, առասպելական ժամանակների վերագրվող այս հաղորդման թվարկած էթնոսներից ու դրանց հիշատակման հերթականությունից արդեն իսկ կարելի է ենթադրել, որ այն մարաքեմենյան շրջանի արձագանք է և վերաբերում է ժա-

39 Անաբասիս, III, 5(17), IV, 3(3-4), էջ 82: Դ ի ո դ ո ր ո ս, XV, 2(1), 8(3, 5), 9(1), 90, 91(1), էջ 71-76:

40 Սալուստիոսի Պատմութիւն Կատիլինեան դավակցության. Վենետիկ, 1856, էջ 176:

մանակի աշխարհի մեծ մասում գերիշխանության հասած արիական եռյակին:

Հայոց իրավասության սահմանների Կովկաս, Հունաստան ու Եգիպտոս ձգվող արեալի գոյությունը պնդող ներկայացված տվյալները ենթադրել են տալիս, որ աքեմենյան տիրապետության ողջ հյուսիս-արևմտյան թևը գտնվել է հայոց թագավորի կամ գահի իրավասության ներքո, ինչը նույնպես ընդգծում է Խորենացին, ըստ որի Արշակ Մեծը եղբորը կարգում է հայոց թագավոր, «զՀիւսիսի և յարեւմուտս տալով նմա զսահման»[41], այդպիսով սահմանելով եղբոր իրավասության արեալը ողջ տիրապետության մեջ:

Հայոց գահի իրավասության վերոհիշյալ սահմանների երբեմնի գոյությունն է հաստատում նաև այն, որ աքեմենյան տիրապետության անկումից հետո, մինչև Տիգրան Մեծ, հին աղբյուրները ներկայացնում են մի ընդարձակածավալ Հայոց աշխարհ, որը ընդգրկում էր Մեծ Հայքը Ծոփքի հետ, Կոմմագենը, Փոքր Հայքն իր ամենաընդարձակ սահմաններով, հարավում՝ Հայոց Միջագետքը, Կորդուքն ու Տմորիքը, արևելքում հասնելով Կասպից ծով: Բացի հայ էթնիկ տարրի գերակշռության այս արեալից, վրաց միջնադարյան աղբյուրների հավաստմամբ, Հայաստանը նույն ժամանակներում գերիշխում էր Այսրկովկասում, իսկ հունահռոմեական աղբյուրների համաձայն, խոշոր ազդեցություն և ակտիվ ռազմաքաղաքական գործունեություն ուներ ողջ Փոքր Ասիայում: Այս ժամանակների հույն պատմագիր Պոլիբիոսի համաձայն, մ.թ.ա. 179 թվին փոքրասիական հիմնական երկրների միջև կնքված հաշտությանը կարևորվել է Հայաստանի մասնակցությունը: Սա պատահականություն չէր. նախորդ՝ Երվանդունյան ժամանակներում նույնպես, ըստ Դիոդորոսի, Հայաստանը ակտիվ մասնակցություն ուներ այս և ընդհանրապես ողջ տարածաշրջանի քաղաքականությանը և անհաշտ մրցակցություն ու պատերազմներ էր մղում Մակեդոնացու աշխարհակալության մեծ մասը ժառանգած Սելևկյան տիրապետության դեմ: Հայոց զինական ուժի վրա հենվելով անկախանում է Կապադովկիան: Ենթադրվում է, որ նույն կերպ դահ է բարձրացել Բիթանիայի Զիաելաս թագավորը, որը մինչ այդ ապաստանել էր Հայաստանում (մ.թ.ա. III դարի կես): Հայաստանը զորավիգ է լինում Մեդիայի անկախացմանը և ընդհանրապես ապաստան ու օգնություն էր ցուցաբերում Սելևկյան պետության խռովարարներին[42]:

Հանձինս հելլենիստական շրջանում հայոց ռազմաքաղաքական շահերի, Այսրկովկասը, ողջ Փոքր Ասիան, Հյուսիսային Միջագետքն ու Ատրպատականը ընդգրկող այս ծավալուն ոլորտի, նորից ուրվագծվում են աքեմենյան շրջանում հայոց գահի Հայաստանից Հունաստան ու Եգիպտոս ձգվող սահմանները: Նույնը կարելի է ասել նաև Տիգրան Մեծի առնչութ-

---

41 Խ. Ա. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. Դրամական շրջանառությունը Հայաստանում. Երևան, 1983, էջ 16-25: Խ ո ր ե ն ա ց ի, II, Գ, էջ 116:

42 Դ ի ո դ ո ր ո ս, XVIII, 41(1), XIX, 23(1-3), XXXI, 17(1), 19(4-5), 27(1), էջ 114, 130, 152, 153, 156: ՀԺՊՔ, էջ 193 (Պ ո լ ի բ ի ո ս. Պատմություն, XXVI, 6(1-12)): Ս տ ր ա բ օ ն, XI, 14(5), c. 498: Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 243-246 (Ա պ պ ի ա ն ո ս, 45, 66, Հ ի ե ր ո ն ի մ ո ս, V): Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Նշվ. աշխ., հ. Ա, էջ 107 (Մ ե մ ն ո ն): ՀԺՊՔ, էջ 211-216 (Լ ե ո ն տ ի Մ ր ո վ ե լ ի. Վրաց թագավորների և նախահայրերի ու տոհմերի պատմությունը):

յամբ, որն իր ենթակայության տակ ունենալով ողջ Այսրկովկասը, գրավելով Ատրպատականը, Կիլիկիան, Արևմտյան Միջագետքը, հասնելով Եգիպտոս, ըստ ամենայնի ձգտել է վերականգնել նույն սահմանները, որի փոքրասիական շրջանի ճակատագիրը կախված էր Միհրդատ Պոնտացու և Հռոմի միջև ծավալված պայքարի ելքից:

Իր բուն բնակության սահմաններից բավական հեռու տարածվող հայոց գերազգեցության այս ընդարձակ ոլորտը կարող էր ժառանգվել միայն նախորդ ժամանակներից: Եթե ընդունենք, որ աքեմենյան շրջանում Հայաստանն ընդամենը մի սատրապություն էը, իսկ սելևկյան շրջանում կիսանկախ կամ այդ հզոր տիրապետությանը մի կերպ դիմակայող պետություն, ապա այն չէր կարող այսպիսի հզորություն, խոշոր ազդեցություն ու ընդարձակում ունենալ, մանավանդ ժամանակի աշխարհի երկու ամենազորեղ տիրապետությունների՝ Սելևկիայի ու Պարթևքի հետ համառ մրցակցությունում:

Արծարծված վերլուծությունը հանգեցնում է այն կարծիքին, որ ռազմաքաղաքական տարբեր ոլորտներում երեք առաջնային էթնիկ միավորների միջև բաժանված աքեմենյան տիրապետությունը տարածքով նույնպես բաժանված է եղել նույն միավորների միջև: *Հայոց բաժինը ներկայացված տվյալներով և հատկապես Խորենացու ուղղակի սահմանմամբ, ընդգրկել է աքեմենյանների գլխավորած դաշնության ողջ հյուսիս-արևմտյան թևը: Մարաց իրավասության բաժինը, ըստ ամենայնի, ընդգրկել է հիմնականում բուն Մարաստանը, գուցե նաև հյուսիս-արևելյան այլ երկրամասեր: Աքեմենյան տիրապետության մնացյալ մասը, այդ թվում թագավորության ձևական կարգավիճակ ունեցող Բաբելոնն ու Եգիպտոսը, մտել են Պարսից բաժնի մեջ (տե՛ս քարտեզը): Սա իր հերթին ենթադրել է տալիս, որ* աքեմենյան տիրապետության կառավարման համակարգում, բացի այն գլխավորող համաարյաց արքայից արքայի և նրան ենթակա սատրապների, *ըստ ամենայնի տեղ են ունեցել նաև* 3 փոխարքաներ, որոնց իշխանության ներքո, 3 արիական առաջնային էթնոսների՝ պարսիկների, մարերի ու հայերի միջև 3 մասի է բաժանվել ողջ աքեմենյան տիրապետությունը: *Այս կառույցը ըստ ամենայնի ժառանգվել էր նախորդ՝ Մարաստանի դերիշխանության ժամանակներից, երբ արիական դաշնությունը անվիճելիորեն կազմված էր նույն՝ 3 էթնոտիրապետությունների՝ Մարաստանի, Պարսքի և Հայաստանի միջև բաժանված, իրենց թագավորներն ունեցող միավորներից: Աքեմենյանների գերագահությամբ արիական դաշնությունը դուրս գալով իր բուն էթնիկ սահմաններից, մեծ ընդարձակում ունեցավ, ինչին զուգահեռ, ըստ ամենայնի, ընդարձակվել են նաև այն գլխավորող 3 էթնիկ միավորների տիրապետության սահմանները: Անհրաժեշտ է նկատել, որ այս դաշնությունն ըստ էության նույն՝ էթնիկ գործոնով թելադրված վարչաքաղաքական եռաթև կառույցն ուներ նաև Պարթևների ու Սասանյանների գլխավորությամբ: Հավանաբար որոշ փոփոխություն են կրել դաշինքի հիմնական միավորների իրավասության չափերը միայն, իսկ դաշնային այս կառույցը էականում պահպանել է նախնական ձևը:*


ԱՐԻԱԿԱՆ ԵՌՅԱԿ ԳԱՇԻՆՔԸ
ԱՔԵՄԵՆՅԱՆՆԵՐԻ ԳԵՐԻՇԽՈՒԹՅԱՆ
Մ.Թ.Ա. IV - VI դդ.
ՀԱՅՈՑ ԳԱՀ
ՄԱՐԱՑ ԳԱՀ
ՊԱՐԹԵՎԻ ԳԱՀ
ԱՍՈՐԵՍՏԱՆ
ՊՈՆՏՈՍ
ԿԱՊԱԴՈԿԻԱ
ՍԱՍԱՆՅԱՆ ԵՐԿՐԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
Արյան գայլերդների ատիտոնները
Միջգետքային ատիտոնները
Մայրաքաղաքներ

* * *

Նախորդ տվյալներից արդեն ակնհայտ է, որ արիական դաշինքի երեք առաջնային էթնոմիավորումներից մեկը հանդիսացող Հայաստանը, աքեմենյան, երվանդունյան և արտաշեսյան շրջանում գերիշխանություն կամ նշանակալից ազդեցություն է ունեցել ոչ միայն իր մերձակա շրջանների, այլև դրանից բավականին հեռու տարածվող երկրամասերի վրա: Ստորև բերվող տվյալները ցույց են տալիս, որ հին և միջնադարյան Հայաստանը ոչ միայն այս, այլև իր գոյության ըստ էության բոլոր էտապներում, դեբաղդեցություն է ունեցել մի արեալում, որն առավել տևականորեն ունեցել է Կովկասյան լեռներից մինչև բուն Մարաստան, Միջագետքի հյուսիսն ու Փոքր Ասիայի արևելքը ձգվող ընդգրկումը: Այս արեալը իրենից ներկայացրել է մի դաշնակցային միավոր, որը գլխավորել կամ որում գերիշխել է Հայաստանը:

Հայաստանի գլխավորությամբ դաշնային միավորի գոյությունն ուղղակիորեն փաստում է Պլուտարքոսը, ըստ որի Հայաստան մտած հռոմեական զորքին դիմավորում է «դաշնակից թագավորների մի մեծ բազմություն, որոնց մեջ հզորագույնը Արտավազդ Արմենն էր»: Այս դաշնակիցների մասին պատկերացում է տալիս նույն Արտավազդի բանակում ընդգրկված օտար զորամիավորումների Խորենացու հիշատակած հետևյալ կազմը. «զբիւրաւորս Ատրպատական նահանգին և զբնակիչս լերինն Կաւկասու հանդերձ Աղուանիւք և Վրօք»: Պլուտարքոսն ու Ապիանոսը նախորդ Տիգրան Մեծի ժամանակների առնչությամբ նման իրավիճակ ներկայացնելով, հայտնում են, որ Հայաստանի հպատակության տակ են գտնվել բազմաթիվ թագավորություններ և հայոց բանակի կազմում ընդգրկված էին մի շարք էթնիկ զորամասեր, որոնց մեջ էին Խորենացու նկատի առած ատրպատականցիներն ու Կովկասը ներկայացնող ալբաններն ու իբերները: Համաձայն Պլուտարքոսի, այս միավորումում առաջնություն է տրվել 4 երկրների, որոնց թագավորները ամենուր ուղեկցել են Տիգրան Մեծին: Նա հիշատակում է դրանցից երեքին՝ Կորդվաց թագավորին և Տիգրանակերտի ճակատամարտում Տիգրանի բանակի աջ ու ձախ զորաթևերը գլխավորած Մարաստան-Ատրպատականի և Ադիաբենեի թագավորներին[43]:

Զենոբ Գլակի համաձայն, հայոց Տրդատ թագավորի բանակի աջ ու ձախ թևերը գլխավորել են Աղձնյաց և Սյունյաց գահերեց-բդեշխները: Ժամանակին այս ընդհանրությունը նկատել է Հ. Մարկվարտը, ըստ որի Տիգրան Մեծին ուղեկցող 4 հպատակ թագավորները դրանք նույն հայոց արքունի «տաճարի» 4 սահմանակալ գահերեց-բդեշխներն են: Այս 4 բդեշխությունները, որոնք կոչվել են նաև «սահմանակալ», եղել են Հայաստանի ծայրագույն գավառները: Հայ աղբյուրներում Հայաստանի հարավային կողմնակալություններ հիմնականում համարվում են Կորդուքն ու Նուշիրականը: Տիգրան Մեծի օրոք Հայաստանը ընդարձակվել էր և բնական է սպասել, որ երկրի խորքում հայտնված այս սահմանակալությունների իրավասությունները հանձնվել են Ատրպատականին ու Ադիաբենեին: Թերևս հենց սա է հանդիսացել Կորդուքի թագավորի խռովության

---

43 Տե՛ս ՀԺՊՔ, էջ 238–241, 247, 288 (Պ լ ո ւ տ ա ր ք ո ս. Լուկուլլոս, XXVI–XXVII, XXXI, Անտոնիոս, XXXVIII), էջ 256 (Ա պ պ ի ա ն ո ս, XI): Խ ո ր ե ն ա ց ի, II, ԻԲ, էջ 158:

առիթը, որին Տիգրանի դեմ ճարպկորեն օգտագործեց Լուկուլլոսը: Այս վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի սահմանակալ-բդեշխությունները եղել են փոփոխական, կախված տվյալ ժամանակվա Հայաստանի ընդգրկումից: Դրանից միաժամանակ հետևում է, որ այս սահմանակալությունները իրենց մեջ են ներառել ոչ միայն Հայաստանը, այլև նրա գլխավորած ողջ դաշնությունը: Դա հատկապես ակնհայտ է հյուսիսային բդեշխության ընդգրկումից: Խորենացու և Բուզանդի համաձայն, ժամանակին Գուգարքի բդեշխության մեջ էր ընդգրկված նաև Վիրքը: Այս միավորի բդեշխը վրաց թագավորը կամ իշխանն էր, որը ենթակա էր հայոց թագավորին: Այլ դեպքում հյուսիսի գահերեցը նստում էր Գուգարքում, որին ենթակա էին Վիրքը և նրա թագավորը: Սա հաստատում են վրաց աղբյուրները, որոնց համաձայն ապստամբած Վրաստանը հնազանդեցնելու նպատակով այստեղ է ուղարկվում հայոց արքայորդի Զարեհը, որը Խորենացու համաձայն հյուսիսի կողմնակալ նշանակված, Արտաշեսի որդի Զարեհն էր: Հայոց թագավորության վերացումից հետո Գուգարքը Վիրքի հետ վերածվում է Սասանյանների հյուսիսային բդեշխության, ինչը ենթադրելի է Ղազար Փարպեցու հաղորդումից, ըստ որի Վրաստանում Վախթանգ թագավորը ապստամբում է Վազգեն բդեշխի դեմ և սպանում նրան: Այս հեղինակը հիշատակում է նաև Վիրքի Աշուշա բդեշխին: Վերջինիս Կորյունը համարում է Տաշրաց, իսկ Խորենացին՝ Գուգարաց բդեշխ, որի ժամանակ վրաց թագավորն էր Արձիլը, իսկ ավելի վաղ այս բդեշխության և «ի Վերիացւոց» վրա համատեղ իշխել է մեկ «առաջնորդ», որը կոչվել է նաև «Վրաց բդեշխ»: Ագաթանգեղոսը, նույն կողմնակալությունը կոչում է «Մասքթաց կողմանե», ինչից ենթադրելի է, որ այն ընդգրկել է ոչ միայն Գուգարքն ու Վիրքը, այլև մնացյալ Այսրկովկասը[44]:

Հայաստանի գերիշխանության տակ գտնվող Այսրկովկասի կամ հյուսիսային կողմնակալության մասին շատ ավելի լայն պատկերացում են տալիս վրաց աղբյուրները[45]: Դրանց համաձայն, ամենանախնական ժամանակներից Հայաստանը և մերձակա երկրները ստեղծել են 8 «եղբայր» էթնոմիավորներից կազմված մի ռազմաքաղաքական դաշնակցային միավոր, որը պահպանվել է մինչև սասանյան ժամանակները: «Թարգամոսյան» կոչված այս դաշնությունն ընդգրկել է Հայաստանը, Վիրքը, Աղվանքը, հարավային ու հյուսիսային Կովկասը, Արևելյան Փոքր Ասիան նկատի առնող «արևմտյան այլ և այլ տոհմականներին», ինչպես նաև «սահմանակից այլ ժողովուրդների»: Այս միավորների միացյալ բանակով Բելի դեմ հաղթության հասնելուց հետո, կայացած գաշինքի առաջին թագավոր է հռչակվել հայոց նախահայր Հայկ-Հայոսը և դրանում գերիշխանությունը ընդհանրապես պատկանել է Հայաստանին. «Եվ այս բոլորը հսկաական էին Հաոսին: ... Իսկ Ադերկիից մինչև սրանց թագավորելը սոմեխների (հայերի)

---

44 Հովհան Մամիկոնյան (կից՝ Զենոբ Գլակ). Տարոնի պատմություն. Երևան, 1989, էջ 5: Կոյուն. Վարք Մաշտոցի. I, ԺԹ, Երևան, 1994, էջ 99: Խորենացի, II, Ը, ԺԱ, ԾԳ, III, Զ, Կ, էջ 126-128, 220, 312, 422, 424: Բուզանդ, III, Թ, IV Բ, V, ԺԵ, ԺԶ, էջ 36, 106, 322, 324: Ագաթանգեղոս, մաս 873, էջ 484-486: Ղազար Փարպեցի. Հայոց պատմություն. III, ԿԲ, ԿԶ, Երևան, 1982 էջ 266, 286. ՀԺՊՔ, էջ 215 (Մրովելի): Հ. Մարկվարտ. Հայ բդեշխք. Վիեննա, 1903:

45 Տե՛ս ՀԺՊՔ, էջ 110-114, 211, 215, 216 409 (Մրովելի): Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, Երևան, 1934, էջ 151, 145, 149:

թագավորների հպատակության ներքո էին (քարթվելները)։ ... ուխտ ու պայման դրվեց, և ստրկացնելով քարթվելներին ու օսերին, սոմեխների արքան գնաց։ ... նվաճված է Սոմխիթը, որից կախված էր մեր թագավորությունը»։ *Նույն աղբյուրում Հայաստանի գերազդեցությունը արտահայտված է նաև նրանով, որ Քարթլիում Նաբուգոդոնոսոր II-ի ժամանակներից (մ.թ..ա. VI դ.) ընդունված 6 լեզուներից առաջինը, որով խոսում էին* «վրաց բոլոր թագավորները, արք և կանայք», *համարվում է հայերենը (սոմխուրի), որը մինչ այդ հանդիսացել է* «Թարգամոսյան» *դաշնության միակ լեզուն։ Սա ըստ էության վկայություն է այս դաշնային միավորում ընդհանուր հաղորդակցության լեզվի գոյության մասին։*

Սահմանային փոփոխությունների պահանջով վրացիների և նրանց միացած օսերի խռովության հարթվելուց հետո, Հայաստանի ու Վիրքի միջև կնքված հաշտության հետևյալ պայմանագիրը վկայում է այս դաշնության միացյալ բանակի և ընդհանուր դրամական միավորի գոյության մասին. «Եթե որևէ թշնամի հանդես գա ձեր դեմ և պատերազմի ձեզ հետ այն կողմերում, մենք՝ երկու թագավորներս էլ անձամբ մեր զորքով կլինենք ձեր կողմից ու կօգնենք, իսկ եթե այդ կողմերում որևէ մեկի հետ պատերազմեք, հազար-հազարական սպառազինված ռազմիկներով ձեզ կօգնենք»։ Եվ այս էլ խոստացան քարթվելները, որ «այս մեր քաղաքում գրամն Արտաշան արքայի պատկերով կհատենք»։

Հունահռոմեական և վրաց աղբյուրներին էականում համաձայնում է հայ պատմագրությունը, որը նույն արեալը որպես մեկ ռազմաքաղաքական և քաղաքակրթական միավոր է ներկայացնում նախնական ժամանակներից մինչև Բագրատունիների անկումը։ Դա ընդգծված արտահայտված է հատկապես տարբեր պատերազմներում հայոց բանակի կազմը ցույց տվող հետևյալ վկայություններից.

Տիգրան Երվանդյանի (մ.թ.ա. VI դ.) բանակը. «զզորս Կապադկացւոց, զՎրաց և զԱղուանից և զամենայն ընտիրս Հայոց Մեծաց և Փոքուանց»։

Երվանդ Վերջինի (մ.թ.ա. III դ.) բանակը. «զզօրս Հայոց, զՎրաց և զկողմանցն Կեսարու, այլ և զՄիջագետացն»։

Արտավազդ II-ի (մ.թ.ա. I դ.) բանակը. «զբիւրաւորս Ատրպատական նահանգին և զբնակիչս լերինն Կաւկասու հանգերձ Աղուանիւք և Վրօք»։

Խոսրով-Տրդատ II-ի (III դ.) բանակը «զզօրս Աղուանից և Վրաց, ... Լփինք, Ճիղպք, Կասպք և այլ ևս որ ի սմին կողմանց, ... զզօրս Հոնաց»[46]։

Սա ուշադրություն է հրավիրում նրա վրա, որ Արբելայի ճակատամարտում Մեծ Հայքի գլխավորած աքեմենյան բանակի ողջ աջ թևը, ըստ Ռուփոսի, կազմված էր այն նույն էթնիկ զորամիավորումներից, որոնցով վերոհիշյալ հայ աղբյուրների համաձայն, կազմված էր հայոց բանակը. Մեծ Հայքի հայեր, կադուսիներ, կապադովկիացիներ, կովկասցիներ, սկյութներ, ասորիներ, մարաստանցիներ։ *Այս մարաստանցիները հայոց բանակի կազմում հիշատակվող նույն ատրպատականցիներն են, որոնց հրամանատար Ատրոպատեսը հետագայում դառնում է Փոքր Մարաստանի*

---

46. Խ ո ր ե ն ա ց ի, I, ԻԹ, էջ 96, II, ԻԲ, էջ 158, II, ԽԴ, էջ 200։ Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն. Պատմություն Արծրունյաց տան. I, Երևան, 1985, էջ 62։ Խոսրով II-ի բանակի նույն կազմն է ներկայացնում նաև Ագաթանգեղոսը (մաս 19, էջ 24, 26)։

սատրապ: Հենց սրա անվան հետ է Ստրաբոնը առնչում այս երկրամասի «Ատրպատական» անվանումը: Իսկ սկյութները հավանաբար հայ աղբյուրների նույն հյուսիսկովկասյան հոներն են, ինչը ենթադրելի է նրանից, որ սրանք Արբելայում կովկասցիների հետ հանդես են գալիս նույն զորամիավորումում[47]: Այս պարզաբանումներից ակնհայտ է, որ Արբելայում աքեմենյան բանակի ողջ աջ թևը հիմնականում կազմել են Մեծ Հայքի և նրա գերիշխանությանը ենթակա մերձակա երկրների զորքերը:

Հայ պատմագրությունը ամբողջական պատկերացում է տալիս Հայաստանի գլխավորած դաշնության ընդգրկման մասին: Փավստոսը հայոց թագավորից ապստամբած, իսկ այնուհետև հնազանդեցված Հայաստանի սահմանային աշխարհների շարքում հիշատակում է Աղվանքը, Վիրքը, «Մարաստանը» և «ղտուն թագաւորին Հայոց» Ատրպատականը: Ագաթանգեղոսի համաձայն, այս երկրների մեծ մասը ընդգրկված էին Հայաստանի նախաձեռնությամբ քրիստոնեության տարածման արեալում. «ընդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագած մինչ ի ծաղս ... ի Սատաղացւոց քաղաքէն մինչև առ աշխարհաւն Խաղտեաց, մինչև առ Կաղարջօք, մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից, ի Փայտակարան ... և յԱմղացւոց քաղաքէն մինչև առ Մծբին քաղաքաւ, քերէր առ սահմանօքն Ասորւոց առ Նոր Շիրական երկրաւն, և առ Կորդուօք մինչև յամուր աշխարհն Մարաց, ... մինչև յԱտրպատական»: Ակնհայտ է, որ սա ոչ միայն սոսկ Հայաստանի, այլ նրա գլխավորած ողջ դաշնության արեալի սահմանումն է: Նույն արեալն է ներառում նաև Ագաթանգեղոսի հիշատակած 4 կողմնակալությունները՝ Նոր Շիրականը, «յԱսորեստանեաց կողմանեն», Արվաստանն ու Մասքթացը[48]:

Այս արեալում հայոց գերազդեցությունը պահպանվում է ոչ միայն բաժանումից, այլև թագավորության վերացումից հետո: Մեկ դար հետո, Հայաստանի գերիշխանությունից դուրս մնացած նույն արեալում «ղրերի գյուտը» տարածվում է ոչ միայն Վիրքի, Աղվանքի թագավորների ու Հռոմի կայսեր համաձայնությամբ, այլև հայոց թագավորի հրամանով: Քրիստոնեության ու գրերի տարածման արեալի մեջ էր ընդգրկված նաև Հյուսիսային Կովկասը, որտեղ ավելի վաղ ժամանակներում Հայաստանի ունեցած գերիշխանության մասին, վրաց աղբյուրների հետ, հավաստում է հայ պատմագրությունը: Հետագայում, Սասանյանների, Բյուզանդիայի ու Արաբական խալիֆայության դեմ ծավալված ծանր պայքարում թեև հարավային արեալը զիջվել էր վերջիններիս, բայց շարունակում էր պահպանվել ռազմադավանական «միաբանութիւն աշխարհին Վրաց, Հայոց և Աղուանից»: Այս դաշնության ռազմաքաղաքական և կրոնամշակութային միասնությամբ վաղուց ձևավորված սահմանների թելագրության արդյունք պետք է համարել Արաբական խալիֆայության նույն արեալը ընդգրկող նահանգի ձևավորումը: Եթե արաբները այս միավորը կոչել են «Արմինա», ապա հայկական աղբյուրներում այն հայտնի է «Հայք» կամ

---

47 Ռ ո ւ փ ո ս, IV, 12 (12), 15(12), էջ 351, 362: Ա ր ի ա ն ո ս, III, 8(4), էջ 97: Դ ի ո դ ո ր ո ս, XVIII, 3(3), էջ 111: С т р а б о н, XII, 5, с. 493.

48 Բ ո ւ զ ա ն դ, IV, Ը, էջ 246, 248, V, Ը, ԺԳ, ԺԵ, էջ 318-326: Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, մաս 842, 873, էջ 468, 484-486:

«զՀայս հանդերձ Վրօք և Աղուանօք» տարբերակներով: Այս միավորը «Արմինիա-Հայք» է կոչվել դեռևս մինչև արարները. Ագաթանգեղոսը վերոհիշյալ սահմանումում նույն միավորն ընդգրկող արեալը համարում է «ընդ ամենայն Երկիրն Հայոց»: Փավստոսը Աղվանքը, Վիրքը և Ատրպատականը թվում է հայոց մյուս երկրամասերի շարքում: Նույն մոտեցումն է հաջորդ՝ VI դարի ասորի պատմագիր Զաքարիա Հռետորի մոտ. նա Վիրքն ու Աղվանքը ներկայացնում է աշխարհագրորեն «Հայաստան աշխարհում» գտնվող երկրներ, որոնք Հայաստանի ու ողջ Այսրկովկասի հետ ներկայացրել են մեկ կրոնական միավոր, ենթակա «Պարսկական Հայաստանի» մայրաքաղաք Դվինում նստող կաթողիկոսին[19]:

Հայաստանի գլխավորած ռազմաքաղաքական դաշինքը քաղաքականորեն վերականգնվում է, երբ Պարսկաստանն ու Բյուզանդիան զբաղված էին տարածաշրջան ներխուժած արաբներով: Դեռևս 652 թվին, արաբները նախկինում «Հայոց իշխան» և սպարապետ Թեոդորոս Ռշտունուն ճանաչում են իշխան «զՀայս զՎիրս և զԱղուանս և զՍիւնիս, մինչև ցԿասպկոհ և զպարհակն Ճորայ» ընդգրկող միավորի վրա: 862 թվին Աշոտ Ա Բագրատունին ճանաչվում է նույն միավորի՝ Արմինիայի «իշխանաց իշխան»: Անկախություն ձեռք բերելով, հայ Բագրատունիները արդեն ճանաչվում են այս միավորի «ֆեոդալական կոնֆեդերացիայի «Շահնշահ», այսինքն՝ արքայից արքա: Սմբատ I-ի (890-914) տերության հյուսիսային սահմանները համապատասխանել են ոչ միայն Արմինիայի սահմաններին, այլև Մեծ Հայքի գերիշխանության Ագաթանգեղոսի սահմանման հյուսիսային արեալին. «յարևմտից Հիւսիսոյ մինչև ցԿարնոյ քաղաք, ... քերեալ մինչև առ ափն ծովուն մեծի, և մինչև ցսահմանս Եղերացւոց և մինչև զստորոտ մեծի լերինն Կովկասու, ... մինչև ցԴուռն Ալանաց, ... և ի քաղաքն Տփղիս, ... և մինչև ի ... Շամքոր»: Սա նշանակում է, որ վաղ ժամանակներից այս արեալում գերիշխող Հայաստանի կարգավիճակը էականում նույնությամբ պահպանվել էր նաև միջնադարում: Ինչ-որ չափով պահպանվել էր նաև նախկին, գեռևս աքեմենյաններից ավանդված կառավարման համակարգը: Հայոց թագավորին ենթակա ու հարկատու էին այսրկովկասյան երկրները, իսկ սա նույն պարտավորություններն ուներ Միջագետքի տիրակալի՝ խալիֆի նկատմամբ: Արաբ պատմագիրների համաձայն Արմինիան բաժանված էր 4 վարչատարածքային միավորների: Այն նույնքան միավորներից՝ «զՀայս զՎիրս և զԱղուանս և զՍիւնիս» էր կազմված նաև հայ պատմագրության համաձայն: Սա նույնպես կարող էր նախկին՝ Մեծ Հայքի գլխավորած դաշնությունը 4 սահմանակալ-բդեշխությունների բաժանելու սկզբունքի ժառանգություն լինել: Նախկին սկզբունքը պահպանվել էր

---

49 Խորենացի, II, ԾԲ, ՁԵ, III, ԾԴ, Կ, էջ, 216, 280, 406, 422: Կորյուն, I, ԺԴ, ԺԶ-ԺԹ, ԻԲ, էջ 94-99, 101: Փարպեցի, II, ԻԵ, էջ 104-108: Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղվանից աշխարհի. I, Թ, Ժ, ԻԷ, Լ, II, Գ, Խ-ԽԵ, Երևան, 1969, էջ 10-12, 70, 71, 76-78, 88, 89, 187-206: Օրբելյան, ԺԶ, էջ 98, 99: Եղիշե. Վարդանանց պատմություն. Երևան, 1989, էջ 188: Սեբեոս. Պատմություն. ԽԶ, Երևան, 1939, էջ 142, 143: Ագաթանգեղոս, մաս 842, էջ 468: Բուզանդ, V, Ը, ԺԳ, ԺԵ, էջ 318-326: Ղևոնդ. Պատմություն. Դ, Ը, ԽԱ, Երևան, 1982, էջ 25-26, 31, 131, ծանոթագրություն 145, էջ 169: Հովհաննես Դրասխանակերտցի. Հայոց Պատմություն. Երևան, 1996, էջ 51, 69, 88, 266-272: ՕԱՀՀՄ, հ. 8, Ասորական աղբյուրներ. Զաքարիա Միտիլենացի (Հռետոր). Ժամանակագրություն, XII, 7, Երևան, 1976, էջ 313:

նաև գահակարգումում. հնում հայոց երկրորդ գահը հանդիսացող Ատրպատականը, որի թագավորը իր զորքով տեղ էր գրավում Տիգրան Մեծի բանակի աջ թևում, այլևս այս դաշնության կազմում չէր, և Սմբատ Ի-ը թագադրելով վրաց թագավորին, «երկրովդ իւրոյ տէրութեանն գնա հաստատէ»: Դրան զուգահեռ հավանաբար փոփոխվել էր նաև դաշնային բանակի շարակարգը, ինչը ենթադրելի է նախորդ շրջանին առնչվող տվյալներից, երբ Վահան Մամիկոնյանը Կուր գետի ափին պարսիկների դեմ տեղի ունեցած ճակատամարտում իր գլխավորած բանակի ձախ թևը, Փարպեցու համաձայն «ըստ կարգի», հանձնել էր վրաց թագավորին: Բագրատունիների 100000-ոց բանակը նույնպես հայոց պետության դոյության համար անհրաժեշտ, նախորդ ժամանակների վերականգնված զորաքանակն էր: Ակնհայտ է, որ Բագրատունյաց Հայաստանը ժառանգել էր Մեծ Հայքի ներքին և արտաքին քաղաքականության առանցքային ուղղությունները: Սա միանգամայն բնական է, քանի որ հայոց թագավորության վերացումից հետո ընթացած պայքարը, Սեբեոսի ու Ղևոնդի համաձայն, հետևել է այն վերականգնելու բացահայտ նպատակ: Ուռհայեցին Աշոտ Ի-ի թագադրումը դիտում է որպես «նորոդեալ դաթոռ թագաւորութեան աշխարհիս Հայոց»: Այս համադրություններից ակնհայտ է, որ հայոց հին և միջնադարյան պատմությունը սերտորեն փոխկապակցված է, և այդ ժամանակների վերաբերյալ դժվար է ճիշտ պատկերացում կազմել հատվածաբար, միմյանցից անկախ քննությամբ[50]:

Երբ հայ Բագրատունիների թագավորությունը վերացավ և Հայաստանի մեծ մասը նվաճեցին Թուրք-սելջուկները, նրանց գլխավորած ֆեդերացիան պահպանվեց, բայց արդեն Վրաստանի և վրաց Բագրատունիների գերիշխանությամբ: Վրաց պատմագրության համաձայն՝ Թամար թագուհին (1184-1207) նվաճում է «Հայոսի որդոց թագավորությունները», որն այլ դեպքերում համարվում է «Յոթ թագավորությունների» երկիր: Ակնհայտ է, որ այս հավաքական անվանումներով կոչվել է այն նույն դաշնային միավորը, որում գերիշխանությունը պատկանում էր Հայաստանին, ինչը նոր իրավիճակում նվաճել էին վրաց Բագրատունիները: Նախորդ՝ ասուրական, արաբական ու հայկական աղբյուրներում այս դաշնությանը կամ միավորին տրված հավաքական՝ «Արմինիա-Հայք» անվանմանը, վրաց աղբյուրներում համապատասխանում է «Հայոսի որդոց թագավորություններ» անվանատարբերակը: Անհրաժեշտ է նկատել, որ նույն միավորին տրված արարական «Արմինիա» անվանումը ծագեցվում է Հայկ-Հայոսին համապատասխանող, Լանթա-Թարգամոս-Թորգոմի որդու «Արմինիա» անունից: Այսինքն այն ունի նույն ծագումնարանական հիմնավորումը, ինչ որ վրացական անվանումը: Վրաց աղբյուրներում ընդունված է նաև նույն դաշնության «Տուն Թարգամոսյան» հավաքական անվանումը, ինչը հայ աղբյուրների նույն՝ «տուն Թորգոմա» ձևն է: Բայց հայ, վրաց, արար,

---

50 Փարպեցի, III, ՀԴ, էջ 325: Ղևոնդ, Դ, ԼԴ, էջ 25, 26, 114: Դրասխանակերտցի, էջ 140, 142, 148, 162, 164, 186, 188, 202 204, 268, 270. Սեբեոս, ԺԸ, ԽԶ, ԽԷ, Ծ, էջ 56, 142-146, 152-155: Մատթեոս Ուռհայեցի. Ժամանակագրություն. մաս I, Երևան, 1991, էջ 8: Թովմա Արծրունի, ԻԳ, ԻԸ, էջ 366, 381: Արաբական աղբյուրները հայերի և Հայաստանի մասին (այսուհետ՝ ԱԱՀՀՄ). Երևան, 1965, էջ 132, ծանոթագրություն 39: Ռ. Մաթևոսյան. Բագրատունիներ. Երևան, 1997:

ասորիների ներկայացված աղբյուրներում, այս դաշնային միավորի անվանակոչության առավել ընդունված ձևը բխում է Հայաստանի կամ որ նույնն է՝ հայոց նախահոր անվանումներից[51]:

Ինչպես նախորդ դեպքերում, այս դաշնության միացյալ բանակի էթնիկ շարակարգը, նրա ներքաղաքական կարգավիճակի արտահայտությունն է: Դրա կենտրոնում հայոց զորքերն էին՝ «Հայաստանում հայերի թագավորի տեղ Լոռիում նստող», դաշնության զորքերի սպարապետ-ամիրսպասալար, «հավատով հայ» Զաքարիա երկայնաբազուկի և ախալցխացի Շալվա և Իվանե եղբայրների գլխավորությամբ, «մի թևում ափխաղներն ու այնկողմացիներն էին, մյուս թևում այսկողմացիներն ու հերկախները»: Նախորդ օրինակների զորքերի շարակարգի սկզբունքով, կենտրոնում պետք է լինեին դերիշխող կողմի զորքերը: Բայց այստեղ հայկական կողմի նախկին կշռի հետ, որոշիչ դերծոն կարող էր հանդիսացած լինել մեծաքանակությունը: Ուռհայեցու համաձայն, վրաց թագավոր Դավիթ IV-ի (1089-1125) մոտ էին հավաքվել «մնացեալ զօրքն Հայոց» և ըստ ամենայնի դերակշռել են դաշնային բանակում: Սրա արտահայտություն պետք է համարել այն, որ Մխիթար Անեցին ու Օրբելյանը Զաքարեին համարում են «սպասալար Հայոց և Վրաց»: Այս տվյալներից ակնհայտ է, որ թեև սույն դաշնության քաղաքական դերիշխանությունն անցել է Վրաստանին, բայց սպարապետությունը շարունակել է գլխավորել հայկական կողմը[52]:

Այսպիսով, տարաբնույթ տվյալների, այդ թվում ժամանակագրական աղբյուրների համաձայն, հին և միջնադարյան Հայաստանը իր մերձակա երկրների հետ ընդհանուր առմամբ ներկայացրել է միասնական բանակ, եկեղեցի, ընդհանուր անվանում, միջպետական լեզու և դրամական միավոր ունեցող կամ դրանց ձգտող մեկ դաշնային միավոր: Առավել տևական ժամանակով այս դաշնության մեջ Հայաստանի հետ ընդգրկված են եղել Վիրքը, Աղվանքը և Այսրկովկասյան այլ միավորներ, Երվանդունիների, Արտաշիսյանների և հայ Արշակունիների օրոք նաև Ատրպատականը, Ադիաբենեն, Հյուսիսային Միջագետքը, Կապադովկիան, Փոքր Հայքը:

Ամփոփելով վերոշարադրյալը, կարելի է ասել, որ Ասորեստանի կործանումից հետո Առաջավոր Ասիայում իր դերիշխանությունն է հաստատել արիական առաջնային ժողովուրդների՝ հայերի, մարերի, պարսիկների, հետագայում նաև պարթևների կազմած դաշնային միավորները: Շատ ավելի որոշակի ու հիմնավորված է պատկերացվում այն տեղն ու կշիռը, որն ունեցել է Հայաստանը ժամանակի աշխարհում: Մասնավորապես ճշգրտվում է, որ Ասորեստանի կործանումից (մ.թ.ա. 609) մինչև V դար՝ թագավորության վերացումը(428 թ.), շուրջ 1000 տարի, Հայաստանը հանդիսացել է Առաջավոր Ասիայում գահակարգով սահմանված 3 առաջնային

---

51 Խ. Թորոսյան. «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» որպես Զաքարյան Հայաստանի ու Զաքարյանների պատմության սկզբնաղբյուր. Երևան, 1992, էջ 340, 342, 396, 422, 457, ծանոթագրություն 9: ԱԱՀՀՄ. Յակոբ Ալ-Համամի. Աշխարհագրական բառագիրք, էջ 16:

52 Խ. Թորոսյան. նշվ. աշխ., էջ 370, 371, 394, 433, 434, 448: Ուռհայեցի, մաս I, էջ 391: Պատմութիւն քաղաքին Ցանւոյ. տե՛ս Մխիթար Անեցի. Մատեան, աշխարհավէպ հանգիսարանաց. Երևան, 1983, էջ 119: Օրբելյան, կե, կզ, էջ 294, 295, 316:

տերությունների մեկը թե՛ ռազմական հզորությամբ, թե՛ տարածքով և թե՛ ազգաբնակչության քանակով:

Ներկայացված քննությունը սոսկ ընդհանրական անդրադարձ է հին և միջնադարյան Հայաստանի ու Առաջավոր Ասիայի մոտ երկհազարամյա պատմությանը, որը առնչվում է հնուց հաստատված այն աշխարհակարգին, որով շուրջ մեկուկես հազարամյակ կառավարվել է ողջ տարածաշրջանը: Սա ըստ էության հանդիսացել է քննարկվող ժամանակների պատմությունը ուղղորդող գլխավոր գործոնը, ինչով հնարավոր է դառնում շատ ավելի խորությամբ ու հստակ պատկերացնել հին և միջնադարյան աշխարհում առանցքային տեղ ու գեր ունեցած Առաջավոր Ասիայի պատմությունը: Այն էական փոփոխություններ ու ճշգրտումներ է առաջադրում և՛ այս, և՛ դրան նախորդած ու հաջորդած պատմության վերաբերյալ ընդունված պատկերացումներում և աղբյուրային ողջ բազայի շատ ավելի մանրակրկիտ վերանայման ու վերագնահատման անհրաժեշտություն առաջացնում:

АРМЕНИЯ В ПРЕСТОЛЬНОЙ ИЕРАРХИИ СТРАН ДРЕВНЕГО МИРА

МУРАД ОГАНЯН

Р е з ю м е

Из различных источников известно, что в древние времена и в средневековье в Передней Азии и граничащих регионах среди государств и народов или представляющих их царей существовала престольная иерархия, то есть ступенчатое распределение власти. В ранние времена на верхних ступенях иерархической лестницы в разных источниках упоминаются Хеттское государство и Хайаса, в дальнейшем чаще Ассирия и Урарту. В конце VII в. до н. э. союзная армия мидийцев, персов и армян нанесла поражение ассирийскому союзу, после чего господство в регионе перешло к союзу этих трех арийских народов. В дальнейшем победившие арийские народы разделили власть и свои владения между собой, в соответствии с занимаемым местом в иерархии, что зависело от военной мощи сторон. С III в. до н. э. к арийской тройке присоединились и парфяне, достигнув господства среди иранских народов и объявивших себя потомками Ахеменидов. В истории тринадцативекового господства арийского союза (с падения Ассирии до арабского господства), Армения иногда достигала высшей ступени на престольной иерархии, но в соответствии со своей военной мощью, занимаемой территорией, количеством населения, она в основном занимала второе или третье место. В истории региона определяется некоторая закономерность, что связано с длительным существованием престольной иерархии. Это дает возможность намного яснее и глубже представлять исторические события Передней Азии, занимавшей центральное место в истории древнего и средневекого мира.

ARMENIA IN THE THRONE HIERARCHY OF THE ANCIENT WORLD COUNTRIES

MURAD OHANYAN

S u m m a r y

From various sources it is known, that in ancient times and in early middle ages, in Forward Asia and in the bordering regions among the states and peoples, or kings, representing those nations, there existed the hierarchy, of the throne.That is the step distribution of authority. In early times, in different sources at the higher steps of the hierarchical ladder, Hetas state and Hayasa were mentioned and further more often Assyria and Urartu. At the end of the 7th century B. C. the Assyrian union was defeated by allied army of Medians, Persians and Armenians. After all that the domination in the region passed to the union of Indo-European -Aryan peoples. Later on these conquerors divided authority and possession among themselves, in conformity with an occupied place on the hierarchical ladder. That depended on military power of the parties in the given period. From the 3rd century B. C., having achieved domination among the Iranian peoples and announcing themselves generation of Achemenids, Parthians joined the Aryan three. On all extent of domination of Aryan union (from fall of Assyria to Arabian domination), Armenia sometimes achieved the highest step on the throne hierarchy, but in conformity with the military power, borrowed territory and quantity of population, basically, it occupied the second or the third place on the step of the throne hierarchy. The highest throne owned Persia and Parthians most of all. Under dictation of existence of throne hierarchy, the history of region developed under the certain diagram. That enables, more correctly and deeply to represent ancient historical events, especially concerning the questions of the Aryan peoples, Indo-European ancestral home.